

ՄՇՈՒ ԱՇԽԱՐՀ

Մշու աշխարհն անուշ է.

Սարն ու ձորն մշուշ է.

Հիւսիս քամին քշէ զիս՝

Ուր ծոցի մէջ քաղէ զիս:



Մ ՈՒՇ - Տ Ա Ր Օ Ն

Ե. ԼԱԼԱՅԵԱՆԻ

ԱԶԳԱԳՐՈՒԹԻՒՆ *)

ԶԻԵՍՏ ԵՒ ԶԱՐԴ

Կանանց.—Մշեցի կանայք նախ հազնում են շալէ շաղիկ որ կարում են կարմիր, տեղական շալից: Սա իջնում է մինչև ոտները, ունի երկար թևեր, կրծքի բացուածք և բկի տակ միայն մի կոճակ: Շապկի ներքին ժառի յետևի եզրն ասեղնագործած է լինում, որպէսզի երբ աշխատելիս կամ ճանապարհ գնալիս անթաքու քղանցքները յետ ծալեն, գեղեցիկ երևայ:

*) Հայոց Ազգագրական ընկերութիւնը 1915 թուի սեպտեմբերին կողմէ մի արշաւորումը տանկանայ փախստականներից հայ բանակաւորների վերաբերեալ նիւթեր հաւաքելու: Այդ արշաւորմանի ղեկավարութիւնը ես էի ստանձնել և այս առիթով չորս ամիսից ունիլ չբխելով այն վայրերը, ուր ապաստան էին գտել հայ փախստականները՝ մենք զրի առանց 874 հեքթար և բազմաթիւ երգեր, Անկախ սրանից ես տանձնապէս հաւաքեցի փախստական մշեցիներից նրանց ազգագրութեան վերաբերեալ նիւթեր, որոնք յայտ ունէի լրացնել մի խմբաշու կազմելով այս ամառ դէպի Մուշ, սակայն նիւթականի սղութիւնը նորաւորութիւն չտուեց:

Վերադառնալով յուսով իմ հաւաքած նիւթերի հարգաստութիւնը՝ ես այս աշխատութիւնը կարգացի հետևեալ երեք գլխակ աննաւորութիւնների առաջ. 1). Եղիշ գանձայ Տէր Բարսեմանի, որ Մուշ քաղաքի նիստեր գանձան է եղել և մի քանի տարի շարունակ առաջնորդական փոխանորդի պաշտոն վարելով չբխել է Մշի գիւղերը: 2) Մուշից քանանայ Տոնադեանի, որ Մշի Արամեց գիւղում երկար տարիներ գանձայութիւն է արել և 3) Ես-զարէթ Մարտիրոսեանի, որ երկար տարիներ վարել է Մշի առաջնորդարանի քարտուղարի պաշտոնը, մի քանի տարի ևսուցչութիւն արել Մշի գիւղերում և կազմել է Մշի գումարտորդական բաւարանը, որ արժանացել է իզմիրեան մրցանակաբաշխութեան: Հաւատացած լինելով, որ զրի առնուած նիւթերը միանգամայն նիւտ են, մենք ազգագրութեան հնէ տալիս, ապագային թողնելով լրացումներ անել, ժամանակ արա Հաւաքել բաժնի վերաբերմամբ, որ ափազանց նշանաբերական է:

Շաղկի տակից, ոտներին հագնում են վարտիկ, որին կոչում են *թումպան*։—Այս կարում են տեղական շիրայից կամ զալից (կապոյտ կտոր)։ Սա կողքերից և առաջից բացուածք չունի, ոչ էլ չափազանց լայն է, ինչպէս վանեցիներինը։ Վերի եզրին ունի խոնշին դարձ։ Որի միջով անց են կացնում թելից գործած խոնջան, որը հանգուտում են աջ կողքի վրայ։ Վարտիքի փոխ-բերանը (ներքին ծայրը) մի թելով փնջուած է, այսինքն ծոպեր տալով նեղացրուած է։

Շաղկի վրայից հագնում են *անթարին*։—Սա կարում են Հալեպ, Անթափ և Արաբկիր գործուած բամբակէ կտորից (մանուսա) և կամ եւրոպական չիթից, կարմիր շիրա աստառով։ Անթարին շատ նման է զըռնին։ Սա էլ իջնում է մինչև ոտները, և քղանցքների աջ ու ձախ կողմերում, մէջքից մինչև ներքև ճեղքուած է, և եզրափակուած դայթանով, ու սրանց կողքերին չորս սանտ. լայնութեան կապոյտ կտոր է կարած՝ որ սընճն է անւանուում։ Այս ճեղքերը կոչում են չար։ Սրա թևերն էլ երկար են և հասնում են մինչև դաստակը։ Սրանք էլ ծայրերում փոքրիկ չաք ունին և եզրափակուած են դայթանով (փոկ)։ Կուրծքը չի կոճկւում, այլ քղանցքները միմեանց վրայ են բերուած և կրծսակրթի մօտ եռանկիւնաձև բացուածք թողնում, որի վրայ կապում են սրտանոցը։

Անթարին գրունից տարբերուած է նրանով, որ սրա բըղանցքներն աւելի լայն են, և կողքերին գրպաններ չունին, թէպէտև ոմանց գրպան էլ են կարում։

Մշեցիներն էլ իրենց հարստութիւնը ցոյց տալու նպատակով մի քանի անթարի միմեանց վրայ են հագնում, մինը միւսից 5-8 սանտիմետր բարձր, որպէս զի նկատելի լինին։

Անթարու վրայ կապում են զոգնոցը, որ միզուր է կոչւում։ Սա կամ գործում են և կամ կարում մանուսի կտորից։ Սրանց միզարը կուրծքը չի ծածկում, այլ. միայն զօտկատեղից մինչև ոտները։ Միզրթիլը, որ շալ-թելից են գործում, բաւական երկար է լինում և 3—4 անգամ սրտանոցի և միզարի վրայով փաթթելով մէջքին, հանգուտում են։

Թեննոց.—Մդիկի երկարութեան, հետզհետէ լայնացող մի կտոր է, որի առաջի, նեղ ծայրը ծոպով նեղացրուած է այնքան, որ դաստակը հազիւհազ կարողանում է ներս մտնել, իսկ միւս ծայրը ունի խոնջանդարձ, մէջը թել անցկացրած, որը հագնելուց յետոյ քաշում են և փաթաթում իրեն վրայ, աննոցը հագնում են միայն աշխատելիս, ձգիկի վրայ, անթարու թևի վրայից, որպէս զի անթարու թևերը չուտով չկեղտոտուին։

Շապկի վրայ, միայն յետոյքին, կապում են փալան։ Սա մանուկներից կարուած քառանկիւնի, մէջքից մինչև ոտները և յետևի կողմից մի կողից մինչև միւս կողը բռնող երկտակ և մէջը բրդի կամ բամբակի շերտ դրած մի կտոր է, որ ճոթով (թել) կապում են մէջքին։ Այս գլխաւորապէս կապում են նիւար կանայք, իրենց աւելի զեր ցոյց ապու նպատակով։

Անթարու վրայ, կրծքին, կապում են սրտանոց. սա կրծքի մեծութեան, քառանկիւնի և վերին ծայրը փոքր ինչ նեղացած կտոր է և ունենում է պոր, այսինքն կիսաբոլոր կտրուածք, վիզը գրկելու։ Մի ժապաւէն ամբարձրած է մի ծայրին, որ բոլորելով վզի շուրջը, ամբանում է միւս ծայրի կոճակի վրայ։ Սրտանոցի կուրծքը զարգարուած է զանազան ասեղնադործ նշխերով։

ՏՂԱՄԱՐԿԱՆՑ ԶԳԾՍՏԵՐ

Շապկի.—Կարում են Բաղէշի սպիտակ կտաւից, կամ Հաւէպի, Ատանայի մէջ դործուած ամիրիկեան կոշուած կտաւից։ Սա իջնում է ծնկներից ներքև, ունի երկար թևեր, որ մինչև դաստակը հասնելուց յետոյ դարձեալ 72 սանտիմետրաչափ երկարում է, միայն մի տակ և հետզհետէ նեղանալով։ Այս մասը կոշուած է հունը կամ թեւանի, և սոփորաբար ձգւում է ուսերին, նախապէս շապկի թևը քշտելով մինչև արմուկը։ Գուրծքը բացւում է մինչև զօտկատեղին, և բկի տակ միայն մի կոճակով կոճկւում է։ Շապկի աջ և ձախ կողքերին 10 սանտիմետրաչափ բացուածք, չաք, ունի։

Թումպան.—Կարում են նոյն շապկի կտորներից։ Բաւական լայն է, հագնում են ոտներին, շապկի տակից։ Գողքերին ունի մի մի բացուածք, որ ջնը է կոշուած։ Ուշխուրդով կապում են առջևու։ Միգելիս շերտից մինը առաջ են քաշում և այդ բացուածքից օգտուում։

Շալուար.—Կարում են տեղական բրդէ շալից։ Միանգամայն նման է թումպանին, միայն նրանից փոքր ինչ աւելի լայն է։ Փողքերի ներքին ծայրերին կարում են դալթան։ Շալուարի մէջ գնում են շապկի քղանցքները։

Սլակ.—Կարում են մանուկա կոշուած տեղական բամբակէ կտորից։ Եւրոպական ժիլէտին միանգամայն նման է, անթև, և անգրպան, կուրծքը երբեմն եռանկիւնաձև բացուած է, բայց սոփորաբար կոճակներով կոճկւում մինչև բուկը։

Սլակը հագնում են շապկի վրայից։

Ոշիկ.—Կարում են չթից կամ մանուկայից։ Նման է ելակին, միայն երկար թևեր ունի և կուրծքն ամբողջովին կոճկւում է։ Հագնում են ելակի վրայ։ Սրա վրայից կապում են զօտի։

Անթադրի.—Կարում են մանուսայից եամ չթից: Կանանց անթարու նման է, միայն փոքր ինչ կարճ, հասնում է մինչև ծնկները, ունի գրպաններ կողքերին, չափերից վերև, և կամ ձախ կրճերն, արտաքուստ:



Մշեցի

արմուռկը, և թևի տակից կախում են մի մի փնջիկ: Կրճերի

Սալթա.— Կարում են մանուդից: Իջում է մինչև գոտկատեղին, ունի երկար թևեր, որ հասնում են մինչև դաստակը. եզրափակում է դայթանով և ունի սընճե, այսինքն եզրներին մօտիկ ներքուստ 3—4 սանտիմետր լայնութեան կապոյտ երիզ է կարում: Կուրծքը ամբողջովին բաց է, առանց կոճկի, և ջրդանցքները իրար չեն հասնում:

Սալթան հագնում են անթարու վրայ:

Ալպա.— Երբեմն սալթայի վրայից, երբեմն էլ ուղղակի անթարու վրայ հագնում են ալպա, որ միևնույն վանեցոց ընդախիկն է: Կարում են այժի չուռից (բրդից) գործած մագոտ կտորից: Իջնում է մինչև գոտկատեղին, ծածկում ամբողջ թիկունքը և կողերը, իսկ լանջն ամբողջովին մնում է բաց: Թևերը հասնում են միայն մինչև մի մի փնջիկ: Կրճերի

եղբերը պատած են կանաչագոյն ժապաւնոյդ և մի սանտրիմետր լայնութեան կլապիտոնով:

ՅԼԵՒ ՅԱՐԴԱՐԱՆՔ



Հրազաթանք

Աղջիկներին.— Սովորաբար սպիտակ լաշիկ (80 սանտ. երկարութեան քառակուսի սպիտակ կտոր) և կամ սպիտակ, անկիւնները նիշուած եազմա (նուրբ բամբակեայ զործուած կտոր) եռանկիւնաձև ծալում են, և անցկացընելով ևակաի վրայով, ծայրերը ծոճրակի մօտ հանգուստում:

Տօն օրերին ծածկում են ֆէս, վերան դնում զազաթ.— Սա արծաթէ ափսէի նման մի զարդ է, որի շուրջը կարճ շղթաներով կախուած են նոյնպէս արծաթէ մահիկներ: Գազաթը զարդարուած է բլբլէֆ նշխերով:

Աղջիկները մազերը հիւսում են, 7—8 հիւսակ անում, և ծայրերն ամբողջում են (խափ կենին) ծալմով.— Մամ-թիւը կամ մետաքսէ սոսկ դալթան է լինում և կամ սրանից կախուած արծաթէ շղթաներով մահիկներ:

Հարսերը միայն երկու հիւսակ են անում, իսկ տարիքաւոր կանայք և պատաները՝ մէկ:

Կանանց յարդարանք.— Մազերը զազաթի մէջտեղից երկուսի են բաժանում, երկու ծամ անում և ծամ-թելով կապում: Ապա ծածկում են ֆէս, որի մէջ դնում են 8—10 սանտրիմետր լայնութեան փայտէ շրջանակ, ամբողջած ըարձիկի վրայ, որպէսզի գլուխը չցաւացնէ: Բարձիկը 3—4 սանտ. տրամագծով, բամբակով լիքը գլան է: Այսպիսի ֆէսը կօչւում է ընթիւ Այս քոֆին գլխին դնելուց

յետոյ, ներքին եզրին կապում են ճակըտ-կապը.—Սա մե-
տաքսից կամ բրդից նուրբ զործած քառակուսի փուշի է, մօտ
80 սանտիմետր մեծութեան, որ նախ եռանկիւնի, և ապա իրար
վրայ, մօտ 4 սանտիմետր լայնութեան ծալելով, կապում են ու
ծայրերը ծոծրակի մօտ հանգուստում: Հարուստ կանայք այս
փուշու փոխարէն ճակըտի-ոսկի են կապում.—Սա էլ մի եզրի
վրայ կարուած 10—20 քսաննոց (1 ր. 60 կ) տաճկական ոսկի
է լինում, յատկապէս մի կողմը ծակուած, երիզի վրայ ամրա-
ցընելու նպատակով:

Տարիքաւոր կանայք քոֆու փայտէ շրջանակը այլ ևս չեն



Մշիցի փոխառուներ՝ Երևանում

զործածում, այլ միայն բարձիկը, որը գլուխը դարձնում է կո-
նական:

Նորատի կանայք քոֆու վրայից կապում են եւազմու կամ
Թամազի (մետաքսէ զործուած շղարշ). իսկ տարիքաւորները՝
մոմի (Բաղէշուձ զործուած Թանձը, բամբակէ կտոր): Եւազման,
Թամազին և կամ մոմին եռանկիւնածն ծալում են, ձգում գլխին
և ծայրերը կզակի տակով անցկացնելով այտերի մօտ ամրացնում:

Տղամարդկանց յարդարանք.—Մինչև 18—19 տարեկան
հասակը գլուխը խուզում են այսպէս՝ ճակատի մէջ տեղին մօտիկ
մի փունջ են թողնում, որ կոչւում է պուպուշիկ, ահանջների
մօտ նոյնպէս մի մի փունջ են թողնում, որ կրում է զուլակ
անունը: Գազաթի մէջ տեղումն էլ մի փունջ են թողնում, որ

անուանուում է ըրջամ (թերևս մի բուռ ծամ)։ Այս բրջամը շատ անգամ երկարում է և հասնում մինչև ուսը։ Ոմանք բրջամի մէջ տեղն աստղանման ածելում են, որպէս զի դասաստանին հայը ուրիշ ազգերից տարբերուի։

Երիտասարդական հասակում պուպուշիկն ու գուլանկները կարում են, և թողնում բրջամն ու աստղածև ածիրուածքը ցմահ։ Երբեմն ականջներին գինա են կախում։

Մուրուք շատ քչերն են թողնում։

Գլխերին ծածկում են պատանինները՝ արախլի, յաճախ ասեղնագործած, երիտասարդները՝ քոլոս, իսկ ձերերը՝ նոյնպէս քոլոս, միայն շուրջը եազմա կամ փուշի փաթաթած։

Ա Յ Ա Ն Ե Ն Ի Ք

Սանանց.—Սովորաբար հագնում են սոլ, ջղմա և ճթիկ-սոլ (հողաթափ, բապուճ) և մըխս—(այծի սև կաշուց կարուած մէաս)։

Տղամարդկանց.—Ունեւերին հագնում են սաղ, հեազհեաէ լայնացող, մինչև ծունկը հասնող բրդից գործուածք, որի վերի ծայրը թելով կապում են, իսկ ներքին ծայրը դնում գուլպի քկի մէջ և վերջինիս թելով կապում։

Գուլպի վրայից հագնում են շարուխ (արեխ), կամ մարդա-նակ սոյ, որ տարբերուում է կնկնակ (կանանց) սոլից նրանով որ կրնկի մօտ փոքրիկ պոչ ունի, հագնելիս բռնել, քաշելու համար։

ԱՄՈՒՄԸՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՐՍԱՆԻՔԻ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հասակ.—Ընդհանրապէս երիտասարդները 18—25, իսկ աղջիկները 12—18 տարեկան հասակում են պսակում։ Աղքատ երիտասարդները յաճախ մեռւում են մինչև 30—35 տարեկան հասակն առանց ամուսնանալու, իսկ աղջիկները՝ մինչև 21—25 տարեկան դառնալը։ Հասակաւոր աղջիկը զգահացած, չլողցած են համարում։ Յաճախ հասակաւոր աղջիկներն ամուսնանում են այրի մարդկանց հետ։ Մի հատիկ երիտասարդները շատ աւելի վաղ են պսակում, 15—16 տարեկան հասակում։ Յօրկնոց գիւղում 12 տարեկանին պսակել էին, ներսէս եպիսկոպոս Խորաթանեանը լուծել էր։ Սովորաբար աղջիկը աղայից 1—5 տարով փոքր և կամ հասակակից է լինում։

ԴՍՆԱՄՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՆՄԱՆՆԵՐ.—Հնումը ազգակցութեան 12 իսկ այժմ 10, իսկ ինամութեան՝ հնումը՝ 8, իսկ այժմ 6 աստիճան է պահանջում։ Կայ նաև հոգեոր ազգակցութիւն, այդ կնքանայրութիւնն է, որի համար պահանջում է 6 աստիճանի հետաւորութիւն։

Միևնոյն կնոջ կաթը ծծած տարբեր հօր զաւակները, սովորութեան իրաւունքով, նոյնպէս չեն կարող միմեանց հետ ամուսնանալ, որովհետեւ համարուած են կաթնաղբէր, կաթնքուր:

Ամուսնութիւնը ըստ ազգութեան.—Շրջապատող այլազգիները թուրքն ու քիւրտը լինելով, կամաւոր ամուսնութիւն սրանց և հայերի մէջ տեղի չի ունենում, հայերը վախենալով՝ քրդունու կամ քրդունու հետ չեն ամուսնանում, իսկ քրտերը և թուրքերը երբեմնապէս փախցնում են հայունները և տանում մահմետականացնում ու պսակում հետները:

Հայ լուսաւորչականները կաթովիկ և ըողորական հայերի հետ խնամութիւն հաստատում են, և այս դէպքում միշտ երիտասարդի եկեղեցունքն է կատարում պսակը, ինչպէս և սրանց զաւակները մկրտութիւնը. միայն կիներ ազատ է իւր կրօնը դաւանելու:

Ամուսնութիւնը ըստ տեղի եւ դասակարգի.—Սովորաբար մշեցիներն իրենց մշեցիների միջից են սիրում ընտրել իրենց զուգակից, միայն երբեմնապէս պատահում է, որ Բուլանքից, Խլաթից, Բաղէշից էլ են հարս բերում, Քաղաքացիներն ընդհանրապէս քաղաքացիների և գիւղացիները՝ գիւղացիների հետ են խնամանում: Շատ քիչ անգամ քաղաքացու աղջիկը աղքատութեան և կամ սղեղութեան, որ և է արատի պատճառով գիւղի հարս է դառնում, Սրբեմն էլ գեղջկունու հարստութիւնը, նրա գեղեցկութիւնը նրան քաղաքացու հարս է դարձնում:

Դասակարգային խտրութիւնն էլ մեծ արգելք է լինում ամուսնական միութեան և մեծ մասամբ բռնութեամբ, փախցնելով է գլուխ գալիս:

Սովորաբար կոյսը կոյսի և այրին այրու հետ է ամուսնանում, երբեմն միայն կոյս աղջիկը, որ շրջապէս է լինում, տանում է այրի մարդու:

Ամուսնութեան զանազան դէպքեր.—Պատահում է, որ նշանուած տղան վախճանուած դէպքում, նրա եղբայրն է ամուսնանում նոյն հարսնացուի հետ և կամ վերջինիս մահուան դէպքում նրա քոյրը փոխարինում նրան, և այս զլիաւորապէս այն պատճառով, որ կատարուած ծախսերը ապարդիւն չանցնին:

Պատահում է, թէպէտ շատ սակաւ, որ ծածուկ կենակցում են եղբոր այրու հետ, այսպէս Մշում նոյնիսկ պատահել է մի դէպք, որ յայտնի դառնալու պատճառով ժողովրդից դատապարտուել է:

Օրօրոցախաղ.—Հնումը պատահում էր, որ երեխաներին նոյն իսկ օրօրոցում նշանում էին, և այս նպատակով օրօրոցի

կամարի վրայ խազ (գիծ) քաշում: Այս կատարում էին գլխաւորապէս երկու նպատակով. նախ գերդաստանները ցանկանում էին կարելոյն չափ շուտ բարեկամանալ և երկրորդ՝ երբ մինի երեխաները չէին ապրում, հաւատալով որ նշանածի բազդը կարող է ապրեցնել՝ շտապում էին նշանելու:

Ուր կապել.—Մշեցիները ևս վանեցիկներին նման աշխատում են պանդխտութեան գնացած երիտասարդներին կապել իւրենց ծննդավայրի հետ, որպէսզի կարելոյն չափ շուտ վերադառնան, սակայն սրանք վանեցիկներին պէս միայն չեն նշանում ազին և մինչև պանդխտութիւնից վերադարձը այդպէս թողնում, այլ նախքան պանդխտելը պատկում են:

Հարսնացուի ընտրութիւն.—Հնումը Մշուհն էլ հարսնացուի ընտրութիւնը կատարել են ծնողները, և նոյնիսկ պատահել են դէպքեր, որ միայն պսակի օրն են ամուսնացողները միմեանց տեսել, սակայն այժմ ոչ այնքան ազջիկները, որքան աղաները լսելի են անում իրենց ձայնը, այն էլ ոչ թէ ուզողակի, այլ մի ազգականի միջոցով: Ընտրութեան միջոցին մեծ ուշադրութիւն դարձնում են ընտանիքի բարեմասնութիւններին, նրա տնտեսական դրութեան վրայ:

Նախքան պաշտօնապէս ազջկան ուզելը, աշխատում են սիրաշահել ազջկայ մօրեղբորը և նրա միւս ազգականներին և սրանց բարեխօսութիւնը խնդրել:

Ազջիկտես.—Երբ ցանկանում են մինի ազջիկն ուզել, երիտասարդի մայրը մի քանի ազգականուհիների հետ գնում է դրա տունը և ուղղակի յայտնում է, թէ եկել է ազջիկը տեսնելու: Եթէ ազջկայ ծնողները արամադրուած են լինում տալու, թոյլ են տալիս՝ որ ազջկան տեսնեն: Սրանք նոյն իսկ առանձնացնում են ազջկան, շատ անգամ մերկացնում, նայում, խօսում հետը՝ որին նա նշանացի կերպով պատասխաններ է տալիս: Եթէ հաւանում են, երեսը համբուրում են և ձեռը մի ոսկի գնում, նախապէս սրա մօր հաւանութիւնն առնելով: Այս գէպքում միայն ձառով կամ որ և է բանով հիւրասիրում են, իսկ եթէ չեն հաւանում, առանց որևէ հիւրասիրութեան հեռանում են:

Նշանտուր.—Ազջիկտեսից յետոյ մի երեկոյ փեսացուի հայրը հրաւիրում է իւր տուն իւր ազգական ու բարեկամ ազամարդկանց, և նրանց հիւրասիրելով մի մի զաւաթ սուրճով ու օղիով, գնում են հարսնացուի տուն: Եթէ որևէ ազգական չի հրաւիրում փեսացուի հօր կողմից, սա իրեն վշտացած ցոյց տալով ուղղակի գնում է հարսնացուի տուն,—և այս բարեկամական

մտերմութեան նշան է համարուած, որովհետեւ որոշ ծախսի հետ է կապուած: Հարսնացուի տանը նախ սուրճ և ապա թէյ են մատուցանուած: Թէյից յետոյ քաւորը խնդրում է, որ մի մի բաժակ օղի տան, և երբ օղին բերում են, խնդրում է, որ հարսնացուին բերեն տեսնեն: Հարսնացուն մի պտաւ կնոջ առաջնորդութեամբ զալիս է և նախ անպատեհաւ կնքաօր և յետոյ սկեսորոջ ու միւսներին ձեռքերը համբուրում: Սրանք բոլորն էլ զաղանի կերպով նրա բունն են դնում մի մէծիտից սկսած մինչև մի ոսկի: Թագուորի հայրն էլ 5—30 ոսկի հրապարակով նուիրում է հարսնացուին, զիցը ձգելով իբր մանեակ և կամ տալիս է գլխին կարելու: Երբեմն, այն էլ շատ հազիւ, հրաւիրում են քահանային, որ զայ նշանը օրհնէ: Սովորաբար նշանը օրհնում են, երբ պատրաստուած են պսակուելու զնալ: Այս սովորութիւնը տեղի ունի գլխաւորապէս Մուշ քաղաքում, ուր խալանի սովորութիւնը իսպառ վերացած է: Հրաւիրեալները հիւրասիրուած են ընթրիքով. յաճախ հրաւիրուած են և դըվիշներ, որոնք զուգի վրայ զարնում են և երգում: Շատ հարուստներ նշանստից յետոյ 10—20 ոսկի տալիս են քաւոր. կնոջ, որը առնելով իւր հետ սովորաբար թագուորի քրոջը, կամ եղբոր կնոջը, գնում է հարսնացուին տեսնելու և իւր ձեռքով կարում է հարսնացուի գլխի շերիտի վրայ այդ ոսկիները, ու հիւրասիրուելուց յետ՝ վերադառնում:

Հաց կտրել.—Աղջիկտեանց մի քանի օր յետոյ մի երեկոյ երիտասարդի հայրը իւր մի քանի աղամարդ աղցականներին հետ, առանց փեսայացուի, գնում է աղջկայ տունը, երբեմն զաւուրդուանի առաջնորդութեամբ, տանելով իւր հետ մի խորոված զառ որ խորովու է կոչուած և 1—5 փութ գինի *):

Այստեղ հրաւիրուած է նաև աղջկայ աղամարդ աղցականներ և ծխական քահանան:


Փոքր ինչ խօսելուց և թէյ խմելուց յետոյ աղջկայ տանից բերում են երեք հատ լաւաշ հաց. քահանան՝ վերցնում է, գնում միմեանց վրայ ու առաջարկում երկու նոր խնամիներին՝ ծայրերից բռնելու. ապա ինքը դիմելով աղջկայ հօրը՝ ասում է. «Աստուածային հրամանաւ, կանոնիւք ու հայրապետաց, քու աղջիկդ, Գիւլիզարը, տվիք այս ինչ մարդու այս ինչ անուն աղային»:

Հայրը պատասխանում է. «Հրամանէք, ամենայն սիրով տվիք»:

Քահանան ասում է. «Աստուած ի մէջ սոցա, և սոքա մի ստանենացին, օգնեցէ նոցա Աստուած, ի վաղօրդայնէ մինչև ի վաղօրդեան»:

*) Մի փութ գինի լինում է 30 լիւր

Տիրացուն աւելացնում է. «հւ եւ խաղաղութեան զՏէր ա-
ղաչեալուք, ընկալ, կեցո՛ւ և ողորմեա՛ւ»
Քահանան ասում է. «Օրհնութիւն և փառք ևայլ՝»



Հայ կաթիլ

Ազատ երկրորդ և երրորդ անգամ նոյն հարցը տալով, միե-
նոյն պատասխանն է ստանում և միևնոյն ազօթքը կրկնում։ Յե-
տոյ պահպանիչ է ասում և հայր մերով զերշացնելով, ասում է-
«Աստուած շնորհաւոր ընէ՛»։ Այս միջոցին բոլոր հանդիսաւ անները-

բղաւում են. Աստուած շնորհաւոր ընէ: Եւ երկու նոր խնամքները ձգում են իրենց բռնած հացերը, կտրում: Տղայի տէրն աշխատում է մեծ մասը իւս կողմին ունենալ և դնում է ծոցը, որ տա՛ի իւր տուն, հաւատալով, որ սրա հետ և հարսնացուի զբաթը պիտի գնայ իւր տուն:

Աղջկայ հայրը նոյն հացերի իւր ձեռքը Տեացած մասը դնում է արգէն պատրաստած հացի սեղանի վրայ, և հրաւիրում ընթերցում Գաւանան վերցնում է մի բաժակ գինի և օրհնում ասելով. «Աստուած շնորհաւոր անէ, մի բարձի ծերանա՛, աղուբաթը (տառոսը) քոլորիդ տունն հղին»:

Մատուցում է սոլմա, փխլաւ, հախնի, ձուածեղ, մածուն, սեր, պանիր: Սրանք բոլորը միաժամանակ դրում են սեղանին և ով ինչ ուզում է՝ այն է ուտում, ինչ կարգով և՛ կամենայ: Միևնոյն ժամանակ «կթխայով» (կաւէ բաժակ) գինի են մատուցանում, որ խմում են երկար բարեմաղութիւններ անելով: Վերջը տղայի անից բերած խորվուն կտոր կտոր են անում, ու նրա փէճը (աջ ոտը) մի զաթայի հետ տալիս քահանային, որ սովորաբար պահում, ասում է իւր տուն, Տեացածն բաժանում են սեղանակիցներին, որոնք անհելով՝ «Աստուած շնորհաւոր ընէ» են ասում:

Ընթերթի ատարին քահանան գոռութեան աղօթքն է ասում, ու դաւալ զուանան սկսում է ամել: Հանդիսականները ցրում են նոյն դաւալ զուանի առաջնորդութեամբ:

Հարսնետն.—«Հաց կտրելուց» մի երկու օր յետոյ տղայի հայրը քաւորի և մի քանի մօտիկ ազգական աղամարդկանց հետ գնում է հարսնացուի տունը, հարսին տեսութեան, տանելով իւր հետ մի-երկու շիշ օղի: Այստեղ հարսնացուն զալիս համբուրում է սրանց ձեռքը ու նուէր ստանում մի քանի ոսկի կամ մէծիտ: Ապա ընթրում են և վերադառնում:

Խոնջա-քոխլա.—Ընդհանրապէս նշանադրուած Տնում են մի երկու ամիս. սակայն պատահում է, որ պսակը յետաձգում են նոյն իսկ մի-երկու տարի: Այս միջոցում՝ նշանաւոր տօներին փեսայացուի անից նուէրներ են ուղարկում հարսնացուի տունը, որոնք կոչւում են խոնջա-քոխլա: Այս նուէրները զիտաւորապէս լինում են ուտելիղէն և զարդեր:

Այսպէս՝ Բրիտտոսի Մննդեան երեկոյին փեսայացուի անից ուղարկւում է հարսնացուի տունը՝ ձուկ, զաթայ, հալւալ, հախնի և հազմա, և կարծես սրան ի տրիտուր ուղարկւում է հարսնացուի տանից փեսայացուի տունը հարսնացուի զործած մի ա-

բախչին, մի զոյգ գուլպա, և կարմիր, ինչպէս և զանազան նշխերով զեղազարդուած, ձուեր:

Բարեկենդանին՝ փեսայացուի տանից ուղարկուած է հաւ, գաթայ, հալուայ:

Տնանընդատաշին՝ փոխինդ, գաթայ: Զատինին՝ կարմիր հաւկիթ, գաթայ, հալուայ, եազմա: Նաև Յարութեան առաւօտեան, ինչպէս և Մաղկազարդին, փեսայացուի տնեցիները գնում հարսնացուն տանում են եկեղեցի և երեք հառ եազմա, մինը կարմիր, մինը՝ դեղին, մինն էլ կանաչ, ձգում երեսին: Եկեղեցուց հարսնացուն տանում են իրեն հօրանց տուն: Մինչև պսակը հարսնացուն իրաւունք չունի փեսայացուի տուն մտնելու:

Համբարձման՝ մի քարդ (30 հառ) հում հաւկիթ, մի նուկի (2 գլուանքայ) կարագ, բլդուր և եազմա, դաստմալ (թաշկինակ): Վարդապետին, Ս. Խաչին, զրեթէ միևնոյն նուէրները:

Ընդհանրապէս տղայի տանը ինչ միքզ որ բերուի, հարսնացուի համար բաժին պիտի ուղարկուի: Եւ նոյն իսկ եթէ տրեցիներին համար որեւէ կտոր առնուի, հարսնացուի համար էլ բաժին են հանում, պահում, որ պսակից յետոյ նրան յանձնեն:

Յոնչա-բողջաները տանում են աղջիկները և կամ հարսները, որոնք հիւրասիրուած են, մի քանի օր մնում, զուլպա, եազմա, թաշկինակ նուէր ստանում և վերադառնում:

Պսակից մի քանի օր առաջ հարսնացուի ընկերուհիները չամիչ, գաթայ, խնձոր առած գնում են հարսին տեսնելու, ուր և՛ հիւրասիրուած են:

Պսակադրութիւնից յետոյ հարսնացուի տանից է ուղարկուած խոնչա-բոխչաներ նորափեսի տունը այս միևնոյն տօների միջոցին:

Միջինքին (Մեծ պասի) նորահարսի տնից նորափեսին ուղարկուած է մի մեծ, ձեթով պատրաստուած բաղարջ, ընկոյզով և բիշմիշով զարդարուած, որ կոչուած է *հօրեգիւն*:

Եթէ նորահարսն այդ օրը հօրանց տանն է լինում, կեսրանց տանից էլ մի նոյնպիսի *հօրեգիւն* ուղարկուած է սրան:

Տաշտաղընը.— Յաւանը կտրելուց յետոյ թագուորի մայրը հրաւիրում է իւր ազգականուհիներին ու բարեկամուհիներին իւր տուն, հիւրասիրում թէյով և հաշով, ապա վերցնելով իրենց հաւ գաթայ, խորովւ (խորոված գառ կամ ոչխար), հալուայ, օզի, շաքար, թէյ, հարսնացուի համար մի եազմա, դճոլ զուռնի առաջ-նորդութեամբ գնում են հարսնացուի տունը: Այստեղ բաւականապէս պարելուց յետոյ դհուլուն և զուռնալուն վարձատրում, յետ են ուղարկում, և հարսնացուի մօր հրաւերով աւագութեան կարգով ծալապատիկ նստում են: Այս ժամանակ հարսնացուն

քաւոր կնոջ առաջնորդութեամբ գալիս է և մօտենալով բոլորին, համբուրում է ձեռքերը. սրանք էլ համբուրում են նրա երեսը և իւրաքանչիւրը ըստ իւր կարողութեան զրամական նուէր է տալիս 5—20 դուրուշ: Քաւոր կինը կամ նրան փոխարինող կինը բարձր յայտարարում է, թէ շէն կենայ այսինչը տվեց հարսին երես հինգ ոսկի և այլն, միշտ չափազանցելով տուած գումարը: Այս սովորութիւնը կոչւում է տաշտատրօնք, թէ ինչ պատճառով յայտնի չէ: Տաշտատրէսի սովորութիւնը, որ կատարւում է հարսանիքի հացը պատրաստելիս ակալքալաքցիներին, գանձակ'ցիներին և այլ ուսանայների, և նոյնիսկ վանեցիկներին մէջ, այստեղ տեղի չէ ունենում. միայն այստեղ երեստեսնանքը կոչւում է տաշտագրօնք:

Մշու քաղաքում և գիւղերում հարսանիքները գլխաւորապէս տեղի են ունենում Ս. Յակոբ հայրապետի պահոց ուրբաթ երեկոյին (նախըրթողի պահին) և Առաջաւորաց պահոց (Ս. Սարգսի) ուրբաթ երեկոյեան, ուշ գիշերը ընթերլու պատճառով ուստիսոց կերակուրներ են մատուցանում: Ընդհանրապէս տէրնդէղը վառելուց յետոյ, այսինքն Տեառնընդառաջից յետոյ հարսանիք չեն տնում, թէպէտ ե' եկեղեցին թոյլ է տալիս, պարզ է, որ այս ևս արևադաշտութեան ֆեստորդ է:

Ազգայնութիւն.— Պատկից միջանի օր առաջ թագաւորի տնիքիները հաւաքում են ազապ երիտասարդ ազգականների և ընկերների շորերը և թագաւորի շորերի հետ լուանում են.—այս լուացքը կոչւում է ազգայուացք:

Միկնոյն տնում են և՛ հարսնացուի տանը, հաւաքում են ազապ աղջիկ—ընկերուհիների սղիտակեղէնը և հարսնացուի շորերի հետ լուանում. այս ևս կոչւում է ազգայուացք:

Եթէ թագաւորի ազգականներից կամ զրացիներից մինը սգաւոր է լինում, թագաւորի հայրը մի գլուխ շաքար և մի շիշ օղի առած գնում է նրանց տուն և թոյլտուութիւն խնդրում դ'հոլ զուռնով պատկելու աղին: Եւ երբ հարսանեկան գնացքը մօտենում է սրանց տանը, դ'հոլ զուռնան դադարեցնում են ածել, մինչև որ անցնում են:

Պատկի նախըրթաց օրը թագաւորը հագնում է կարմիր կապայ, կապում գաշոյն և իւր ազապ ընկերներից երկուսին ընտրելով ազապ-ազայի և նրան օգնական, սրանց հետ դ'հոլ զուռնի առաջնորդութեամբ այցելում է իւր ազգականներին, բարեկամներին և ընկերներին, և համբուրելով հասակաւոր ազամարդկանց և կանանց ձեռքերը, ասում է. «Մենք ձեր գաւակն ենք. յընձա կէնիմ ձեր յօանէն, յիբկուն կնիկ ճնով հրամայէք հարսնիքս: Հրա-

ւերեւելները նրան ընծաներ են տալիս, այսպէս՝ ոչխար, կով,
գառ, դրամ, սալթա (հանգերձ), գօտի, արախչին: Սովորութեան
համեմատ այս նուէրներն անմիջապէս պիտի արուին, այնպէս որ
իսկոյն բերում են զառները, ոչխարները, կովերը, ականջները
կտրում, իբրեւ նշան նուիրարեւութեան և ուղարկում թագուորի
տունը: Հրաւիրուած ազապ ընկերներն անմիջապէս ժամնում են
թագուորին և կազմում նրա շքախումբը: Հրաւէրըն աւարտե-
լուց յետ՝ թագաւորն իւր ազապ-չարի-ներէ հետ առանձնանում է
մի տեղ, սովորաբար մի գոմ, ուր ազապները նրան լողացնում
են ազապ-պաշու հետ: Սրանց մերկացնելուց յետ մէջք մէջքի
են տալիս և երեք անգամ յետոյքները միմեանց խփում: Լողա-
ցնելուց յետոյ սկսում են հանգերձները հազցնել: Ազապպաշին
հազցնում է թագուորի շորերը զանազան գովասանքներ տալով
ու երգելով հետեւեալ երգը.

Թագուոր բարով, հազար բարով.

Մըր թագուորին ծաղիկ պիտէր ծաղկունաց,

Ծաղկւներ, նռներ պիտէր ծաղկունաց.

Որ փըթըթեր թուփն ու տերեւ հըտ իրբաց:

—Սուրբ Կարապետի զօրութենով

Ծառի ծաղիկն ուր նուզերով

Մլան, թըփոան փըթըթալով,

Ու ծաղկեցան շատ գունեւերով:

Մըր թագուորին արեւ պիտէր լուսարաց.

Արևն էր կանաչ, խաչ փոկ պիտէր սրտէն կախած.

Սառա պիտէր, պաղ աղբըրներ ծըմծմաց,

Որ իր շէյրանով սէյրան ելնէր սրտարաց:

Աստուած, որ կաս գու բարի ես,

Մըր թագաւորի զարկն օրհնես.

Սուրբ Կարապետ, քե մատաղ ես,

Մըր թագաւորին շնորհ բաշխես:

Հիմադրէր.—Թագուորի տնից մի աղի գլխին դրած ուղար-
կում են թագուհու տունը մի մաղի մէջ դրուած մի քիչ հինայ,
երեք գաթայ և մի խաչ գաթայ: Վերջինս խաչանէ և և չամիչնե-
րով զարդարուած:

Տղան պարում է հինան գլխին դրած և երգում.

Բուրիկ ջան, դու կանի,

Շորոր էրէ, նազ արի,

Թուզթ մը հինա եմ բերի,

Արևս թոռովդ թըղ թըփոբ:

Հինա բերող տղին մի նուէր—դրամ կամ թաշկինակ—տալիս են, հինան վերցնում, թագուհու վարպետը շաղում է հինան, դնում թագուհու ձեռքը, չորս աղջիկ ձեռները քսում են թագուհու հինա դրած ձեռքին և հինան փախցնում, յետոյ վարպետը կրկին է դնում։ Ապա դնում են բոլոր աղջիկների ձեռները, վերջը կտրատում են խաչ-զաթան և բաժանում հանդիսականներին, և այս միջոցին աղջիկները դրամ են ձգում մի թափ մէջ, որ յետոյ տրւում է վարպետին իբր նուէր։

Այս միջոցին նոյն, թագուհու անից ուղարկւում է թագաւորի տունը թագաւորի համար սպիտակեղէն, այսպէս՝ մի շապիկ, մի իշիկ, մի արախչի, և մի խնձոր՝ վերան չորացրած մեխակ (դարանֆիլ) շարած՝ փաթաթում են մի մետաքսէ թաշկինակի մէջ, դնում մի մադի մէջ։ Մի տղայ դնում է այդ մաղը իւր գլխին, և յաճախ պարելով, տանում, յանձնում թագաւորի աննիցիններին, նախապէս մի նուէր ստանալով։ Այս շորերը թագաւորը հագնում է պսակի օրը, իսկ խնձորը բռնում ձեռքին. պսակի ւաւարտին, թագավերացումից յետոյ, ազատ-պաշին կիսում է այս խնձորը, կէսը տալիս թագաւորին, կէսը թագուհուն՝ ուտելու։

Մուշ քաղաքում հինա-դէքը միբիշ տարրեր է կատարում։ Խորվու հետ, և կամ տառնձին, թագաւորի քոյրը և քաւորկինը միջանի հարսների և աղջիկների հետ գնում են հարսնացուի տուն, տանելով իրենց հետ մի թղթէ պարկի մէջ ամած մի բիշ հինայ։ Այստեղ հարսնացուին լողացնում են *), շորերն հագցնում և ապա իրենց մէջ տնելով, քաւորկինը գլուխը սանդղում, մազերը հիւսում է, իսկ շրջապատող աղջիկները երգում են։

Մազերը հիւսելուց յետոյ թէ հարսնացուի և թէ հրաւիրուած աղջիկների և հարսների ձեռներին հինա են դնում։—Հինան ջրով շաղախում են, ապա քսում ձեռքի փին և եղունգներին, իսկ ձեռքի երեսին՝ ոչ։ Ապա շորով կապում են, առաւօտ արձակում, բուռը և եղունգները գեղնած են լինում։

Ընթրում են և ցրւում։

Նոյն օրը թագաւորն ու ազա-պաշին, ինչպէսև՝ բոլոր ազապ-շարին հինայ են դնում ձեռներին։ Հինան գովելու, խաղացնելու սովորութիւնը չկայ։

Եթէ հարսնացուն ուրիշ զիւղումն է գտնւում, իւր տան

*) Հարսնացուին մի աղէկայ հետ են լողացնում, որ շրջերը չիփեն և զոգաւոր-զաշին, թուր են դնում տաշի մէջ, որպէսի շրջերը չհամար-ձակուին մօտենալ։

քաւորկինը և իւր վարպետուհին, որ կար ու ձև կամ ասեղնա-
գործ է անփորձեղ, դալիս են հարսնացուի մօտ՝ լողացնում են
և հինայ դնում:

Սթէ հարսնացուն ուրիշ գիւղում է գտնուում, պսակից ժքանի
օր, իսկ եթէ նոյն գիւղում մի քանի մամ առաջ թաղաւորի անից
ուղարկւում է հարսնացուի տունը մի կամ երկու ոչխար, կամ
երկնջ կենդանի, իսկ երկրորդ դէպքում ոչխարը կամ ոչխարները
խորովու արած, այսինքն մորթած ոչխարի թոքերը, ստամոքսը,
աղիքները հանում են, և ապա ամբողջովին կտնում թոնիր՝ մար-
մանդ կրակի վրայ և թոնրի բերանը խփով խփում և կաւով ծե-
փում: Ե—Ե մամից յետոյ լաւ խորովում է, հանում են և այդ-
պէս, ազանդ մանր կտրատելու, ուղարկում: Այս խորովու տանողը
կոչւում է Եաղուէս, որին անպատեառ մի օրեւէ ընծայ են տալիս,
ինչպէս՝ թաշկինակ, գօտի, զուլպայ և այլն: Գիւղի երեխաները
յարձակում են աղուէսի վրայ և խփում, քար գցում, մինչև որ
փախչում, ապաստանում է հարսնացուի տանը:

Կնտել կամ թրաշ.—Թաղուորի շուրքը հագցնելուց յետոյ
ազապաշու առաջնորդութեամբ և ազապաշարի ընկերակցու-
թեամբ թաղուորը հանդիսաւոր կերպով, զհոլ ու զուռնով գալիս
է իւր տուն, ուր արդէն հաւաքուած են լինում հարսնեւորները:
Նախապէս թաղուորի համար տան մէջտեղում թախտ է կապուած
լինում, որի վրայ թաղուորը քաղում է. երկար պարելուց յե-
տոյ կանչում են սափրիչին, որ սկսում է սափրել թաղուորի
գլուխը. ազապաշարին մի մեծ մոմ ձեռին կանգնում է թաղուորի
աջ կողմում և սրա օգնականը՝ նոյն կերպ ձախ կողմում: Սափ-
րիչը գլխի մազերն ամուսների ձևով ամրիւմ է և ապա ձայն տա-
լիս. «Եկէք, եկէք թաղուորի յերես, թաղուորի բոստան կանչեցեք
է, թուռա (բնձիւղ) տուեր է, եկէք ձմերուկ, խիար, եկէք խը-
լըսաւ»:

Նախ հայրն ու մայրը և ապա միւս հանդիսականները դրամ
են դնում սափրիչի հայելու վրայ, իսկոյն սափրիչը բղաւում է.
«Եկն Թաղ թաղուորի հէրն ու մէր, շէն Թաղ, հազար ոսկի է կան
թաղուորի երես: Եկն Թաղ, շէն: Հանդիսականները կրկնում են.
«Էկն Թաղ, շէն»:

Սափրելուց յետոյ ազապաշարին վերցնում է թաղուորի
գլխարկը և երեք անգամ դնում գլխին ու բարձրացնում, բղա-
ւելով. Աստուած շնորհաւոր անէ: Բոլոր հարսնեւորները կրկնում
են նոյնը:

Սափրելուց յետոյ թաղուորի հայրն ու մայրը գալիս
համբուրում են թաղուորին, և օրհնում, որից յետոյ նա բըռ-

նում է գեօմետի գլուխը և պարում: Պարը մեծ մասամբ տևում է բառական երկար, յետոյ ընթրում են, խմում, պարում և առաւօտեան մօտ ցրում:

Մուշ քաղաքում աղապները բոլորը միասին գնում են բաղանիս, բոլորը լողանում, և բաղնիսի վարձը վճարում է աղապաշին. այս բաղանիսը կոչւում է փեսա-բաղնիք: Սափրելու ծէսը կատարւում է մեծ մասամբ թաղուորի տանը, և երբեմն միայն բաղանիսում:

Պատկ.—Պսակ երթալու օրը թաղաւորի տանը հաւաքւում են սրա թէ աղաժարդ և թէ կին աղապներ. գալիս է քահանան, օրհնում թաղաւորի գլխարկը, որը վերցնում է աղապաշին՝ մի նուռ կամ խնձոր նուէր տալով և գնում թաղաւորի գլուխը՝ երեք անգամ բարձրացնելով և ասելով. «Աստուած շընորհաւոր անէ՛ն: Հարսնեւորները նոյնը բարձրաձայն կրկնում են:

Գլխարկ օրհնելու ժամանակ աղապ-շարիններից մինը բարձրանում է կտուրը և հսկում, որ փեսացուի թշնամիները չգան կտուրը և մի մետաքսէ թել հանգոյց ձգեն, որի զօրութեամբ նորափեսան կարող է կապուիլ—կորցնել տոնականութիւնը:

Գլխարկը օրհնելուց յետ թաղաւորի հայրը, քաւորը *) և աղաժարդ հարսնեւորներից շատերը դուռ գոռնի առաջնորդութեամբ գնում են հարսնացուի տունը, տանելով իրենց հետ օղի, գինի և հարսնացուի հարսանեկան շորերը: Սյառեղ հարսնացուի քահանան օրհնում է նշանը և հարսանեկան հանգերձը, որը վերցնում է քաւոր կինը և տանում հագցնում հարսնացուին: Այս միջոցին եկող հարսնեւորները հիւրասիրւում են ճաշով:

Հարսնացուի հանգերձը հագցնում է նրա վարպետուհին, շրջապատուած նրա ընկերուհիներով, որոնք երգում են հետևեալ երգը.—

Տնիկ ու չէ՛մքիկ,
Ել դուք մի՛ք ժամա,
Մենք ինք ժամալու,
Շողիկ^{**}) տանելու:

*) Երբեմն պատուում է, որ քաւորի պաշտօնը կատարում է թիւրք կամ քիւրդ: Խայի փոխարէն մի սուր բանելով հարս ու փեսայի գլխին: Վերջին տարիներս Մլոյ առաջնորդ ներսէս եղ. Պարսխանեան այս կարգի պապներն անվուր են համարել և պակապիք քահանաներին մի քանի տարի փրկմազուրկ են աքել: Մովսիս և Եփեղէն՝ այսպիսի դեպքեր կրկնւում են. վերջին ժամանակներս թուրք կամ քուրդ քաւորը իւր կողմից մի երաշխաւոր էր ընտրում մի հայի, որ խայք բանէր, իսկ ծախսերը ինքը անելով համարւում էր քաւոր:

**) Հարսնացուի անուշը:

Աւրիկ ու կժիկ,
էլ դուք մէք ժամա,
Մենք ինք ժամալու,
Շողիկ ողբալու:

Աղբրիկ էլ չեմժըմաս,
Մաղիկ էլ չխելվելաս (շարժուել),
Մենք ինք երբալու,
Շողիկ երամէն շոկելու:

Գիշեր, դու տաբի եղիր,
Աղօթքան դու լէ հեռացիր,
Մէր երձմ հասարթ հանիր,
Էս անգարձ, օղուր (յաջող) օրին:

Սրբ հարսնացուին հազցնում, կապցնում են, կանչում են քաւորին, և սա նուէր է տալիս վարդեառուին, իբր վարձատրութիւն ախա աշխատանքին, որ նա կրել է հարսնացուին կարու ձև, ասեղնազործ սովորեցնելու: Մշեցիների մէջ չկայ այն սովորութիւնը, որ քաւորը կապէր հարսնացուի գօտին, միայն անդի է ունենում այն, որ երբ հարսնացուին կամենում են առաջ քերել, հարսնացուի եղբայրը և կամ մի մօտիկ ազգական բռնում է դուռը և չի թոյլ տալիս, մինչև որ քաւորից մի գօտի նուէր չի ստանում. այս գօտին կոչւում է ճաղբըր-գօտի:

Վարդեառուին հարսնացուին մեռաքսէ քողով պատած առաջ է բերում, և սա համբուրում է հօր, մօր և միւս ազգականների ձեռքերը, լաց լինելով. իրանք էլ օրհնում են նրան ու համբուրում նրա երեսը:

Քաղաքում հարսնացուի տան քաւորը բռնում է հարսնացուի ձեռքը և տալիս թաղուորի քաւորին, ասելով.

—Սանիկս քեզի կը յանձնեմ, քեզի ալ Աստծուն, կը խընդրեմ օր մուխիսէ էդնիս. (պաշտպանես):

Քաւորը պատասխանում է. Վնհոգ ձեռքէք, իմալ իմ ախիկ, իմ աչքի լուսի պէս կը պահեմ:

Հարսնացուն հնումը չոքում, համբուրում էր տան շէմքը, իսկ այժմ համբուրում է կշտանոցը (փեղկը), և դուռն դալիս: Գիւղում երկու կին, որոնք կոչւում են Նարսընքուր, բռնում են նրա կոնքերից և մի աղայ, որ սովորաբար եղբայրը կամ մի մօտիկ ազգական է լինում, զնում է նրա յետևից. վերջինս կոչւում է Նարսնաղբըր: Քաղաքում հարսնաղբերը մի ուրիշ աղի հետ քանում է հարսնացուի կոնքերից, իսկ հարսնքուրերը զնում են հետևից: Այս միջոցին հարսնացուի ազգականները բռնում համ-

բուրում են թագուորի տնից եկած կանանց, որ-նք ամէն կերպ ընդդիմանում են և երբեմն կուռի պատճառ դառնում: Այս համարոյրը կոչում է ինամապալա: Հարսնացուի հայրն ու մայրը, ինչպէս և մօտիկ, տարիքոտ ազգականներն ու կնքահայրը, չեն ուղեկցում հարսնացուին: Սրանք մի ուրիշ օր, ինչպէս կը տեսնենք, գնում են հարսին տեսնելու:

Երբ հարսին հանում են հօրածց տանից, նրա զրպանը չամիչ են լցնում և մի քանի զոյգ փոքր գուլպաներ՝ գնում, այս ժամանակ աղջիկները երգում են.

Զչամիչ մազով մաղեցին,

Շողերի (հարսնացուի) ջէբեր լցեցին,

Զգարիբ համփայ դրեցին:

Եւ որովհետեւ սովորութիւն է, որ հարսնացուին տանելուց յետ-թախաը չեն աւելում, որպէս զի նրանից յետոյ հօր տունը չաւրուի, ուստի նոյն աղջիկները երգում են.

Մէրիկ, մի աւլի զտախտիկ,

Որ յաւրի քու աղջկայ հետիկ,

Թըղ մնայ քի նմուշիկ,

Որ հանիս քու սրտի հասրաթիկ:

Պսակ տանելիս հարսնացուի կօշիկների մէջ գիւղերում գար-նանացան ցորեն են ածում, իսկ քաղաքում մանր դրամ, որպէս զի հարսի ոտը փնքարով (խէրով) գայ կեսըանց տան վրայ:

Թագուորի տնից եկող հարսնածններն աշխատում են հարսնացուի տանից գողանալ մի խուփ, որպէս զի հարսնացուն զխուփս — չնօսկան լինի, նաև զդալ, որպէս զի նրա բաժին զամաթն էլ նրա հետ գնայ:

Հարսը կամաց կամաց, դաւուլ գունդի տաշնորդութեամբ ուղեորւում է դէպի եկեղեցի:

Թագուորն էլ ձեռին մի թաշկինակով բռնած խնձոր քթին դէմ տալով, աջ կողմում ազապալաչին, ձեռին մի թուր, ձախում ազապալաչու օղնականը՝ ձեռին նուրբը, քաւորն ու քահանան էլ յառաջ ընկած դուլ գունդի տաշնորդութեամբ նոյնպէս գնում են դէպի եկեղեցի, միայն ոչ այն ճանապարհով, որ հարսնացուն է անցել: Բաղաքում թագուորը գնում է եկեղեցի և այստեղ սպասում հարսին, մինչդեռ գիւղերում նա պարտաւոր է մի տեղ սպասել, մինչև որ հարսնացուն գայ:

Բաղաքում թագուորին եկեղեցում նստեցնում են մի աթոռի վրայ, աւաղանի դասում, և ազապալաչին ու օղնակտը կանգնում են կողքերին, հարսնեւորներից չարանճինները գալիս աշխատում են համբուրել թագուորին, իսկ ազապալաչին ու իր օղնա-

կանը, ազապները հետ թողլ էն տալիս, սկսում են աղմուկ բարձրացնել:

Գիւղերում թագուորը սպասում է մի որոշ տեղ, հարսնացուին բերում են նրա յետեւ կանգնեցնում, և հրում, խիում թագուորի քամակին: Ապա այսպէս թագուորն առաջից, հարսնացուն յետից յառաջանում են դէպի եկեղեցի: Հարսնուորները հսկում են, որ սրանց միջով մարդիկ չանցնեն, և կամ քար նետեն, որպէս զի սրանք «կոխուածք» չլինին—չկորցնեն առնականութիւնը:

Եկեղեցու դուռը ժամկոչը փակած է լինում, քաւորը դրամական նուէր է տալիս, որ բաց անի: Ազապ-պաշին իւր ձեռի թրի ծայրը խրում է դռան ճակատին և այդպէս բռնում, մինչև որ թագուորն ու թագուհին անցնում են տակից: Այս միջոցին ազապ-պաշին և ազապները բղաւում են. «Աստուած շնորհաւոր ընէ»:

Եկեղեցում քահանան առանձին, առանձին խոստովանեցնում է հարս ու թագուորին, և սրանց խրատներ տալիս, առանձնապէս թագուորին պատուիրում է չորեքժուռք, ուրբերթժուռք և կիրակժուռք երեկոներին և ամբողջ մեծ պտսին հետու մնալ տառազատից, ինչպէս և ծննդաբերութիւնից առաջ և յետոյ քառասունք պահել:

Քաւորը խաչը թագուորի և թագուհու գլխին բռնած միջոցին, մի քանի անգամ կամացուկ խփում է սրանց գլխներին:

Իսկ պսակի կատարման միջոցին թագուորը աշխատում է հանել թագուհու մատից մատանին և անցնել իւր մատը և միևնոյն ժամանակ իւր աջ ոտով նրա ձախ ոտը կոխում, որպէս զի թագուհին իւր իշխանութեանը հպատակուի:

Ուշագրաւ է, որ հարսնուորն էլ պինդ բռնում է հարսնացուի ձամերի արմատից, որպէս զի վերջինս «կապս» չընկնի (կանացիութիւնից չզրկուի):

Պսակի խորհուրդը կատարելիս քահանան ազապ-պաշու և նրա օգնականի ձեռքից առնում է նուրցն ու թուրը և դնում սեղանի վրայ, ապա պսակի աւարտին մի նուէր ստանում և վերադարձնում:

Պսակի աւարտին թագուհին ու թագաւորը կողք կողքի կանգնում են սեղանի առջև, քահանան թագաւորի ձեռքը տալիս է աւետարանը և հրաւիրում հարսնուորներին թէ «եկէք թաքուորի յերես»: Նախ հարսնուորը դալիս համբուրում է թագուորին և հարսնացուի հօր կողմից նուիրում է մի գլխարկ, կամ մետաքսէ թաշկինակ և կամ ժամացոյց, միևնոյն ժամանակ մի

քանի դուռուշ խաչնամբոյր ձգում ազապ-պաշու ձեռին բռնած փոսէի մէջ: Յետոյ բոլոր հարսնեորներն են խաչնամբոյր ձգում, որ պատկանում է քահանային:

Պսակի աւարտին ժամկոչը կրկին փակում է եկեղեցու դուռը և կրկին նուէր ստանալով քաւորից՝ բաց անում: Թագուորն ու Թագուհին միեւնոյն կարգով, ինչ կարգով որ միասին զնացել են եկեղեցի, վերադառնում են Թագուորի տունը, միայն ուրիշ հանապարհով: Այս անգամ սկսում են մեծ ուրախութիւն ցոյց տալ՝ երևում են երեխաներ, որոնք երեսներին ալիւր քսած՝ զանազան խեղկատակութիւններ են անում, մինն էլ մի իշու վրայ Թարս նստած, պոչը ձեռն առած, զանազան միմոտութիւններ անելով՝ դրաղեցնում է հարսնեորներին: Եթէ Թագուորի ազգականների զանով են անցնում, օղի և քաղցրեղէն են դուրս բերում, հիւրասիրում: Շատ անգամ ազապ-պաշին մի բաժակ օղի երեք անգամ մօտեցնում է Թագուորի շրթունքներին և բարձր բղաւում: Վնասուած շնորհաւոր անիւ: Եթէ հարսնացուի տունը նոյն հանապարհի վրայ է դնւում, միայն Թագուորին իւր ազապ-պաշու հետ տանում են տուն, մի մի նուէր տալիս և անմիջապէս յետ դարձնում: Երբ մօտենում են Թագուորի տանը, մինը երգում է-

Թագուորի հէր տիւրս արի,

Փունջ մը շուշան ինք բերի,

Թագուորի մէր, տիւրս արի,

Թոփ մի խութնի ինք բերի,

Թագուորի աղբէր, տիւրս արի,

Ապրշմէ փէժկիւր մ'ինք բերի: *)

Դիւղերում Թագուորի մայրը մի քանի հաց ձեռին դուրս է գալիս, մի քանի հաց է դնւում հարսնացուի գլխին և երկու հաց ձեռներին բռնած սկսում է պարել: Այս միջոցին մինը ջրով լի մի փարջ խփում է գեանին Թագուորի ու Թագուհու առջև և կտրում: Պարում են նաև ուրիշ կանայք: Հէնց այս ժամանակ տնեցիներից ոմանք կտուրից չամիչ, ընկոյզ, երբեմն նաև մանր դրամ Թափում են հարսի գլխին, հարսնեորները հաւաքում են:

Ազապ-պաշին խրում է թրի ծայրը դռան հակատին, այս միջոցին մի կտոր խմոր տալիս են Թագուհուն, որ նոյնպէս կպցնում է դռան հակատին, և ապա Թագուորն ու Թագուհին մտնում են ներս, նախ աջ ոտքը դնելով շէմքի վրայ:

Քահանան զգեստաւորում է և Վնասուտ լուսոյ զամ Քաւուր փառացք շարականն տանով եօթն անգամ պտտում Թոնրի շուրջը: Նրան հետևում են նորապատկները իրենց չքախմբերով:

*) Վարխանդ տես Ազգ. Հանգէս XX դիրք եր. 165.

Ապա քահանան հրաւիրում է թագուորի մօրը, որ զայն Աւետարանը համբուրէ: Մինչև այդ ժամանակ Աւետարանը թագուորի կրծքին բռնած է լինում, քահանան վերցնում է, առաջարկում նրա մօրը համբուրելու և խաչամօմոյր ստանում:

Այս միջոցին ծերունիներից մինն ասում է.

—Ո՛վ ջաղամաթ, հանդիսականք,

Դուք լէ օրհնէք մըր թագուորին.

Որ մըր Զուխտաք ծլին ծաղկին,

Ընդրանց պտուղք մանկունք եղնեն:

—Դուք օրհնելով մըր արեւուսին,

Մենք լէ կը խնդրենք վերին հօրին,

Որ մըր Զուխտակի աղուբաթին

Բարով խէրով որդիքդ հասնին:

Ապա ազապ-չարիները թագուորին առնում, զնում են մի ուրիշ սենեակ, իսկ թագուհուն տանում են վարազոյրով ծածկուած անկիւնը, ուր անմիջապէս մի արու երեխայ են բերում, զնում նրա գիրկը, որպէսզի նրա առջինեկը ազայ լինի, և նա նախապարտադարձ փոքրիկ գուլպաները իւր գրպանից հանելով հագնում է երեխային: Հարսնադրէրը և հարսնջուրերը մնում են նորահարսի մօտ:

Այդ գիշերը նորահարսը չի քնում, որովհետև հաւատում են, որ եթէ քնի, նրա զեղեցկութիւնը կանցնի նորափեսին, իսկ եթէ նորափեսան քնի, սրա զեղեցկութիւնը կանցնի նորահարսին:

Պսակի օրը հարսնացուի տանը ևս հրաւիրում են ազգական կան կանայք և ազամարդիկ, որոնցից անշուշտ երկու կին և երկու-երեք ազամարդիկ, հարսնացուի հետ զնում են և կեկեղեցի և այստեղից զայիս նորափեսի տունը, ուր միայն քառորդ ժամ մնալով երկական բաժակ օղի են խմում և վերադառնում նորահարսի տունը, լուր տանելով՝ որ յաջողութեամբ կատարել են պսակի խորհուրդը: Այստեղ այս բոլոր հրաւիրեալները շարունակում են ուրախութիւնը և ընթրում են, խմելով նորափեսի տանից նուէր բերուած $\frac{1}{2}$ —1 լիտր (12—24 շիշ) օղին:

Թագուորը իւր ազապ-չարիների հետ մի այլ սենեակում, կամ հարեանի տանը երզում, պարում են, իսկ թագուորի տանը ճաշ են մատուցանում ինչպէս արդէն եկած հարսնեկոթներին, այնպէս և՛ նոր հրաւիրուած մի քանի յարգելի հիւրերի: Ծաշի վրայ քահանայի առաջարկով խմում են մի քանի կենացներ, բարեմաթթութիւններ անելով: Ծաշից յետոյ հարսնեկոթները ցրւում են, հրաւիրուելով գիշերը գալ պարահանդէսին մասնակցելու, եթէ կամենան:

Սրանց ցրուելուց յետ ազապչարիները թագուորի հետ գալիս են տուն, ճաշում, որից յետոյ մի կաւէ քէսաս բերում ընդնցըմալը դնում են հարսնադրօր առաջը, պահանջելով, որ բոռնցըմով խփի կոտրի, ասելով. «Կոտրի քէսաէն, ապրի փեսէն»։ Եթէ սա վստահ է իւր ուժի վրայ՝ խփում է բռնցըմով և կոտրում, իսկ եթէ վստահ չէ և կամ խփելով չի կարողանում կոտրել, այն ժամանակ 10—20 դուրուշ տուգանք է վճարում, որով խմիչք են առնում, խմում։

Սրանցից յետոյ կանայք են ճաշում, ապա ըտուրը նորից հաւաքում են պար-տունը, սկսում պարել։

Պսակի գիշերը, երբ թագուորի տանը կանայք նստում են ճաշելու, թագուորի կողմի տղամարդիկ գնում աշխատում են համբուրել նորահարսի տնից եկած կանանց, իսկ սրանք ամէն կերպ ընդդիմանում են։ Այս համբոյրները կոչւում են խնամապաշ։

Պսակի հետեւեալ օրը նորահարսի տանից խոնչա—զանազան թխուածքներ կամ շաքար—է ուղարկւում նորահարսին, հետեւեալ օրերն էլ նոյնպիսի ընծայ ուղարկւում է նորահարսի ազգականներին։

Հարսնադրէրը մի երկու օր ֆուս է նորահարսի մօտ և ապա մի գօտի, կամ մի զոյգ կօշիկ և կամ մի ֆաս ընծայ է ստանում և վերադառնում, իսկ հարսնուրիքը պսակի նոյն գիշերը վերադառնում են, առանց որեւէ ընծայ ստանալու։

Քաղաքի պսակադուլթեան սովորութիւնը տարբերւում է գիւղականից հետեւելով. 1) Հարսու թագուորի գլխին բէշմիշ, ընկոյզ և մանր դրամ չեն ածում։ 2) Թո՛ւրի շուրջը թագուորն ու թագուհին 7 անգամ շրջելիս՝ քահանան չի մասնակցում, այլ երիտասարդներն են զանազան երգեր երգում։ 3) Պսակի հետեւեալ առաւօտեան թագուորի մօտիկ տղամարդ ազգականները հրաւիրւում են խաշ ուտելու։ Նոյն առաւօտեան հարսի տնեցիք էլ հրաւիրւում են իրենց մօտիկ տղամարդ ազգականներին խաշ ուտելու։ 4) Ազապչարիները պսակի գիշերն աշխատում են գողանալ նորահարսի մատանին, սակայն հարսնադրէրը հսկում է՝ թոյլ չտալու, և եթէ գողանան կը յանձնեն թագուորին և կստիպեն հարսնեղբորը փրկանք վճարելու և վերցնելու։ 5) Տեղի է ունենում կլթխի սովորութիւնը, որ գիւղերում չկայ։

Նուրծ կտրել. —Պսակից մի կամ մի քանի օր յետոյ կատարում են պսակի վերացումը, որ տեղական բարբառով կոչւում է շնուրծ կտրել, կամ շխաշ-փոկ (նարօտ) առնել (կտրել)։ Փաշիս է քահանան և կնքանայրը, մի քանի տղամարդ բարեկամներ։

Քաղաւորն ու թաղուին մէջը մէջքի տուած նստում են մի քար-
 քար վրայ, և կամ դուռն գլխի տուած շորում, Քաւորն ալ ձեռ-
 քով բռնում է սրանց գլխին իւր թուրը. պատեանք խաչածն
 վրան դրում, ձախ ձեռին էլ ունենում է նուրձը: Քաւանան
 պատշաճ կարգը կատարելուց յետ՝ նուրձը բաժանում են, աղապ-
 պաշին էլ թաղուորի ձեռք խնձորը կիսում է, կէտը տալիս թա-
 ղուորին, կէտը թաղուհուն՝ ուստի ու թաղուորի պսակն էլ թաղ-
 ուորածէրը դրամ է տակիս քաւանային տանում և տանում հարս
 ու թաղուորի քարձի մէջ կարում:

ԿԹԽԱՄ.—Քաղուորի հայրը պսակի երկրորդ կամ երրորդ
 օրը հրաւիրում է նորանարսի հօրը իւր աղամարդ ազգականների
 հետ շնորհ բերել իրենց ծօռ. հրաւիրում է նաև իւր ազգական
 աղամարդկանց: Ժաշով հիւրասիրելուց յետ՝ նորանարսի ազգա-
 կանները մէկ մէկ գնում են նորանարսի ծօռ մի ուրիշ սենեակ,
 և մօտը մի քիչ նստելուց և խրատներ տալուց յետոյ՝ դրամական
 նուէր են տալիս՝ 20 դուրուից մինչև մի օսկի: Բայց նախ և առաջ
 նորանարսի տան քաւորը խնդրում է թաղուորի տան քաւորից
 կանչել թաղուորին, որ տեսնեն: Նախ դալիս է աղապ-պաշին և
 բոլորին մի մի բաժակ օղի բաշխում, ապա երևում է թաղուորը,
 համբուրում է երկու քաւորներին, հօր և աներոջ ձեռքերը և միտ-
 ներին բարևում. ապա մի մի բաժակ օղի բաշխում և հեռանում:
 Սրանից յետոյ արդէն ճաշում են:

ՍՕՔԻՆ օրից յետոյ նորանարսն առաջին անգամ աւելում է
 սենեակը և այս միջոցին դիտամար մի դրամ և կամ զարդ գնում
 են դռան յետևը, որպէս զի նա վերցնէ իրեն:

ՋԷՆԷՂ.*—Պսակից 10—15 օր յետոյ տեղի է ունենում միայն
 քաղաքում հարսի օծիսի առաքումն ու բացումը: Հաւաքում են
 նորանարսի ազգականուհիները և նրա օծիսը մի սնտուկի մէջ
 դարսած, տալով մի մարդու շալակ. գնում են թաղուորի տունը:
 Նորանարսի մայրը չի գնում, մինչև որ նորափեսան ինքը չի
 գալիս հրաւիրում: Հրաւիրում են նաև նորափեսի ազգականու-

*) Լաց կարելուց մի քանի օր յետոյ աղայի հայրը մի երկու աղամարդ
 ազգականների հետ գնում է աղկիայ տունը, ուր հրաւիրում են նաև միքանի
 աղամարդ ծօռ ազգականներ: Այստեղ երկու կողմի ազգականները սկսում են
 սակարկել: Բէ ինչ պէտք է այս աղայի հայրը աղկիայ հօրը իրը Խաւան,
 (գրած-օծիս): Վերջիվերջոյ որոշում է 3—30 օսկի խաւան և հետևեալ նուէր-
 ները. Հարսնացուի հօրը՝ մի սար (վերարկու) շալկար, շալ դոսի, երբեմն
 ձի, հրաքան: Հարսնացուի մօրը՝ մի թոփ խուփին կամ այսնա կոչւում մե-
 տաքտ կտոր, կամ ձանուռ: Այս նուէրը կոչւում է զմայրերի—գրածնին
 կտոր: Հարսնացորդը մի զոյգ կռնուտա կամ ֆէն և կամ շալ, նաև մի բարա-
 տ, այրինքն մի կողմ կամ երկու ոչխար:

Սակարգութեանից յետոյ աղայի հայրը տալիս է աղկիայ հօրը խոտապ-
 ուած օսկիները, որպէսզի սա այդ դրամով պատրաստէ հարսնացուի օծիսը:
 Երբեմն աղայի հայրը չխոտանալով աղկիայ հօր աղմուկիցն զրոյ, որ աւ-
 րոյշ դրամը կը ծախէ հարսնացուի վրայ, առաջարկում է միտսին գնալ և
 գնել նորկուտուրում իրերը և շարեղենը:

Քաղաքում հնումը եղել է այս սակարգութեան, բայց այժմ վերացել է.
 բնականապէս աղկիայ իւր հետ օծիս է տանում հանդերձեղէն և զարդեր,
 բայց ոչ դրամ կամ կտուածք:

հինները: Այստեղ մի կին, նախապէս ստանալով մինչև մի մէճիւս կամ մի շորիզէն նուէր, բաց է անում սնտուկը և մի առ մի օժիւր ցոյց տալիս բոլոր հրաւիրուած կանանց, որից յետոյ հիւրասիրում են հաշով:

Սովորաբար օժիւր բաղկացած է լինում հետեւեալ կտորներից.

6—12 ձեռք սպիտակեղէն, նոյնքան էլ հանդերձ:

2—3 զոյգ կօշիկ և գուլպա:

Թել, ասեղ, հայելի, սանաթ, լուցկի:

Գիւղացու հարսի օժիւր լինում է.

2—3 մեզար (զոգնոց), ասեղնազործ.

2—3 մեզրի թել.

1—2 սրտանոց և սրտանոցի թել.

Մի քանի ասեղնազործ արախի.

Մի շապիկ և մի վարտիկ նորափեսի համար:

Մի քանի զոյգ գուլպա և սաղ (զանկապանակ կամ թղլուխ):

Սարեկ—կաւէ ամանի բերանին կապելու ասեղնազործ կը տաւի կտոր:

Լարնթել (պարկի բերանը կապելու թել),

Պամաթել—սամինները կապելու զեղեցիկ զործուած թել:

Ձիու լոխթա (նոխտա):

Հաւաթ (ձիու կապ):

Այս բոլորն էլ նորաւարսը պատրաստած է լինում ինքը, նախքան նշանագրութիւնը:

Այս օժիւրը մնում է հօրանց տանը և երբ նորահարսն առաջին անգամ դարձ է գալիս՝ վերադարձին տանում է իւր հետ:

Հարսի առաջին դառն են փեսայաւատիւ.—Պսակից 15 օր յետոյ նորահարսի եղբայրները կամ հօրեղբօր տղաները գնում են նորափեսի տունը, տանելով իրենց հետ մի գլուխ շաքար և հիւրասիրուելուց յետոյ վերցնում են նորահարսին, բերում իրենց տուն^{*)}: Սովորաբար նորահարսը բերում է իւր հետ սկեսարից ստանալով մի մեծ նուռ և համբուրելով իւր հօր ձեռքը՝ տալիս է նրան: Զորս-հինգ օր յետոյ նորահարսի հայրը հրաւիրում է իրենց մօտ նորափեսին, իւր ազապլարիներով^{**)} նրա հօրը և աղամարդ մօտիկ ազգականներին, ինչպէս և՛ իւր և նրանց քաւորներին, նաև իւր աղամարդ ազգականներին ընթրիքի: Նորափեսան չի ընթրում հրաւիրեալների հետ, ոչ էլ սրանց հետ խօսում, այլ մի անկիւնում լուռ նստում է: Երբ սրանք վերադառնում են, նորափեսան իւր ազապ-պաշու և մի քանի ազապլարիների հետ մնում է, և նստում ընթրելու, սակայն բերանը բաց

*) Նորահարսի մոյրը քաղաքում ըստ հին սովորութեան ոչ միայն այս, այլև ուրիշ ժամանակ չի գնում ինձանց տուն մինչև որ նորահարսը օրդի չէ մնում: Այս ժամանակ միայն նա պատրաստում է խանութուրի շորեր և օրացոյց ու տանում գնում ինձանց տուն:

**) Եթէ ազապլարիներին չհրուիրէ, սրանք գնում փեսի անցած հաւազարհի վրայ յարդ են ցանում:

չի տնուժ, մինչև որ աները մի նուէր չի խոստանում, իբրև ակոսածամբնէն: Ինքն էլ մի ընծայ է տալիս զորանչին, որ կոչուում է զորանչ-փերթիկ:

Տասնըինգ օրից յետոյ նորափեսի եղբայրները մի գլուխ (3—4 ֆունտ) շաքար ընծայ են տանում նորաւարսի տունը, ուր հիւրասիրուելուց յետ վերցնում են նորաւարսին և վերադառնում: Սա կոչուում է առաջին դարձ և նորաւարսի ծնողները պարտաւոր են 1—2 ոսկի կամ մի ֆատան ընծայ տալ:

Սրանից էլ տասնըինգ օր յետոյ քաւորն է պարտաւոր նորաւարսին դարձ տանելու, և մի քանի օրից հրաւիրելու նորափեսին իւր ազապ-չարիներով: Քաւորն էլ պարտաւոր է նորափեսին և նորաւարսին մի մի ընծայ՝ 1—2 քսանիոց ոսկի (1 ր. 60—3 ր. 20) և կամ մի ֆատան ընծայ տալ: այս ընծան կոչուում է զէլդաթ:

Քաւորի տանից յետոյ երբ 15 օր ֆուում է նորաւարսը կեսարանց տանը՝ մօրեղբայրն է հրաւիրում, և դարձեալ նորափեսին իւր ազապ-չարիների հետ մի երեկոյ փեսապախւ կանչում, ընծաներ տալիս: Այստեղ ևս 15 օր ֆուումց յետ՝ վերադառնում է. ապա այսպէս շարունակ 15-ական օրից յետոյ հրաւիրում են միւս ազգականները և այդքան օրեր պահում, այնպէս որ ամբողջ տարին նորաւարսն անց է կացնում կէս տարին սկեսրանց և կէսը իւր ազգականների և հօրանց տանը:

Ամեն հրաւիրող պարտաւոր է մի գլուխ շաքար ընծայ տանել, ինչպէս և՛ մի գլուխ շաքար են բերում նորաւարսին յետ տանելու:

Նորափեսան փեսապատուի գնալիս մի նուռ է տանում և նուիրում տան մեծին: Բացի սրանից մի սինի թխուածք ընծայ է ուղարկում նորափեսի տանից նորաւարսին դարձ տանող տունը: Երբեմն էլ թագուորի ազգականներն են նորաւարսին դարձ տանում և այս դէպքում նորաւարսի հօրանց տանից մի սկո տեղ թխուածք ընծայ է ուղարկում:

ՏՂԱՐԵՐՔ ԵՒ ՎՆՈՒՆՔ

Ամլուիթիւն.—Ամուլ կնոջը շքեր են կոչում: Այսպիսի կանայք եօթն անգամ բորիկ ոտով ուխտ են գնում Ս. Կարապետի վանքը, նրա գերեզմանի շէմքի առջև ծուներ դնում, մատաղ անում, խաչ-համբոյր տալիս, և ապա երբ վերադառնում են տուն, տնեցիները ճընեղուկ-պաշար կոչուած բոյսի տերևները խաշում են, նրանց նստեցնում են տաշտի մէջ և այս խաշած ճընեղպաշարը (ցնում փորին: Երեք անգամ այս կրկնելուց յետ՝ կինն առագաստ է մտնում: Եւ եթէ օրանց ուխտը կատարւում է և երեխայ են ունենում, վերջինիս մազերը չեն կտրում և մի տարուց յետոյ նրանց տանում են վանքը, գլխի մազերը Ս. Կարապետի գերեզմանի վրայ

խուզում, և մի ոչխար մատղում: Մատուցացու ոչխարը զարգարում են կարմիր նշխերով:

Նոյն նպատակով ուխտ են գնում նաև Սուրբ Աղբրիկ: Պատում են թէ Ս. Աղբրիկը մի ոգի է. որ յառաջացել է խաչուած Թրիստոսի ձեռքի մեխից և շատ զօրաւոր է. մի անգամ, երբ մի երեխայ ընկել է թռնիւր, վառուել ու ածուխ դառել, օգնութեամբ են կանչել Ս. Աղբրիկին, և սա եկել խաչակնքել է ածուխը, որ անմիջապէս վերակենդանացել, դարձել է նախկին երեխան:

Ժնունդ.—Յղի կինը մինչև ծնունդը միատեսակ աշխատում է, վախենալով սկեսրանց նախատինքից: Պէտք է ասել, որ մեծ մասամբ Մշի ԹԷ քաղաքի և թէ գիւղերի կանայք հեշտածին են, սակայն և այնպէս պատահում են ցաւալի դէպքեր, այս պատճառով և՛ Հաղորդութիւն են տալիս, որպէսզի եթէ մեռնին, անհաղորդ չմնան:

Յղի կինը ուխտ գնալիս մինչև ուխտատեղին հասնելը զգուշանում է ձեռքերն իւր մարմնի որևէ տեղի վրայ դնել, հաւատալով, որ այս դէպքում ծնունդիք երեխայի համապատասխան տեղում սրբի նշանը—մի սև կամ կարմիր պուռ (բիծ) կը դրոշմուի. ուստի և ձեռները կողքին պարզած մնում է, մինչև ուխտատեղին համբուրելը:

Երեխան արգանդում խաղալիս՝ ուժ առաջ որ խաղայ՝ նրա բնաւորութիւնը կստանայ, այս պատճառով և՛ ասում են. «Ծանառաջ ի խաղէ, քթու յառաջ ի խաղէ»:

Ծնունդիք երեխայի սնորդ որոշելու նպատակով դիմում են հետեւեալ միջոցներին.—

Երկանք աղալիս յղի կինը վերցնում է երկանքը և նայում, եթէ աղացած ցորենը հաւաքուել է երկանքի ըմբուկի (ցցի) շուրջը, նշան է, որ ծնունդիք երեխան արու է լինելու, իսկ եթէ ցրուած է լինում՝ աղջիկ:

Յղի կնոջ շորերից մի կտոր կտրում, գնում են մրջիւնների բ՛ի առջև, եթէ մրջիւնները վերքնեն տանեն բունը, նշան է, որ տղայ է ծնուելու, եթէ ոչ՝ աղջիկ:

Եթէ երեխան մօր արգանդում խաղալիս՝ աջ կողմում խաղայ՝ տղայ է լինելու, եթէ ձախ՝ աղջիկ:

Եթէ յղի կնոջ պորտը «յերեսն իշկայ», այսինքն դէպի վեր ուղղուած լինի՝ տղայ է, եթէ «ցած իշկեց»՝ աղջիկ:

Եթէ յղի կնոջ երեսը պայծառ է, ծնունդիք երեխան արու է, եթէ «թթուկ», այսինքն տխուր՝ աղջիկ:

Եթէ յդի կնոջ փորը կըտր լինի՝ աղայ է ծնելու, եթէ բոլոր
քաշուակ, ցածր, լինի՝ աղջիկ:

Եթէ մօր արգանդում երեխան շուտ խաղայ՝ աղայ է, եթէ
ուշ՝ աղջիկ:

Եթէ յդի կինը քորոց, ցախաւել, մախաթ, թիակ գտնի՝
աղայ է ունենալու. իսկ եթէ ասեղ, աւել, մատնոց՝ աղջիկ:

Եթէ յդի կինը բնական շատիւ, այսինքն ոտները միմեանցից
հեռու դնի նստի, յամբ քայլէ՝ աղջիկ է ունենալու. իսկ եթէ
բոլորովուրդ նստի, թեթիւ քայլէ՝ աղայ:

Յդի կնոջ կաթը կթում են ջրի մէջ, եթէ ընկնում է ջրի
տակը՝ ծնունդից երեխան աղայ է լինելու, իսկ եթէ մնում է
երեսին՝ աղջիկ:

Յդի կնոջ ամեն քմահաճոյք կատարում են, որպէս դի ծնո-
ւելիք երեխայի աշխարհում ծուռ չլինի: Սրան կոչում են մտափոխ
էզնիւ: Ասում են նոյն իսկ, որ մտափոխ կանայք կարող են նաեւ
վիժել իրենց արգանդի պտուղը:

Պատմում են, թէ մի կին մի դարբնի արհեստանոցի առջնով
անցնելիս տեսնում է, որ մի խորոված հաւ են բերել նրա հա-
մար, իսկոյն մտափոխ է լինում, վերցնում է մի թաշկինակ ոսկի
է ամում և ծառայի ձեռքով ուղարկում դարբնին, խնդրելով տալ
իրեն այդ խորոված հաւը: Դարբնը չի համաձայնում, կինը մի
բակեղաթ ոսկի է ուղարկում, սակայն դարբնը յուսալով աւելի
ստանալ, կրկին մերժում է, այս անգամ մի ջորի բեռնում է ոս-
կով և ուղարկում, դարբնը դարձեալ սահման չի դնում իւր ա-
զահութեան, համոզուած լինելով, որ մտափոխ կինը ինչ գնով
էլ որ լինի, ձեռք է բերելու այդ հաւը: Սակայն այս անգամ
կինն այլևս չի կարողանում համբերել և վիժում է: Դարբնին
այս լսելով խեղճ կորցնում է, և այնուհետև հէնց որ երկաթը
տաքացնում, դնում է սալին, դնում նայում է, թէ ոսկով բեռ-
նուած ջորին կրկին յետ չբերվի, յետ է դառնում, տեսնում, որ
երկաթն արդէն պաղել է:

Մանդկանն երկունքի ժամանակ ծունր է չորում՝ երեսը դար-
ձնելով դէպի արևելք, տատալով պըպըղում է յետևում և սեղ-
մում յետոքը. մի կին, որ մանկաբարձ է կոչւում նստում է մի
քուրսու վրայ, և զրկում ծննդկանին:

Եթէ ծնունդը դժուար է լինում, հեշտացնելու նպատակով
դիմում են հետևեալ միջոցներին:

Արօրը բերում են ծննդկանի տան կտրի վրայ, մասերն ի-
րարից արձակում, որ ծննդկանն էլ իւր մասից՝ երեխայից, ար-
ձակուի:

կանչում են քահանային, որ կատարում է բարձակման ծէսը և շուր օրհնում: Այս շուրը խմեցնում են ծննդկանին:

Ծննդկանի հայրը դալիս երեք անգամ անցնում է ծննդկանի վրայով և իւր քղանցքով շուր տալիս նրան:

Մի լաւ, մատակ ձիու սքբակի տեղում շուր են ածում և այստեղից փոքր ինչ վերցնում, խմեցնում ծննդկանին:

Եթէ ծննդկանն ուշագնաց է լինում՝ հրացան են արձակում, բղաւում, ծննդկանին ապասկում, նրա ետզմի մէջ ասեղ շուլուլում, բարձի տակ մանգաղ, թուր, խաշերկաթ, դաշոյն, դանակ դնում, գութնի շղթայ բերում նրա շուրջը տարածում, որպէսզի ալքերը չկատողանան մօտենալ և ծննդկանի ջիգեարը հանեն տանին, իրենց զաւակներին տան ուտելու:

Երեխան ծնւում է, երբ յգութեան ժամից անցնում է 9 ամիս և 9 ժամ:

Երբ տասնամայրն ուզում է կարել պորտը՝ 5—10 դուրուշ դնում են նրա բերանը իբր ընծայ՝ պորտ կտրելէն: Եւ երբ պորտի կապուած մասն ընկնում է՝ տանում ձգում են կամ մանրաժաճառի բոխէն, որնէ խանութ, որ երեխան վաճառական դառնայ և կամ տան մի անկիւն, որ աղջիկը համեստ և տնասէր լինի:

Եթէ ընկնորը շուա չեն ընկնում, մաժում են ծննդկանի փորը: Ընկերքը փաթաթում են շորի մէջ և պատի մի ծակի մէջ ամփոփում, որ չոր տեղ լինի, այլապէս երեխայի ալքերը ցաւոտ կըլինին:

Պորաը կտրելուց յետոյ թոնրի մոխիրը լցնում են գետնին, մի քիչ խոտ դնում վերան և ծննդկանին պարկեցնում վերան, մէջքին մի զօաի կապելով: Այս միջոցին մի հում սոխ են տալիս նրան, որ մի քիչ ուտէ, մնացածը ծամէ, հանէ և ձգէ իւր շուրջը, որ ալքերը չմօտենան նրան: Մոխրի վրայ ծննդկանը պառկած մնում է չորս օր, յետոյ նրան տեղափոխում են իւր անկողինը:

Ծննդկանին պառկեցնելուց յետոյ տասմէրը երեխային լողացնում է գոլ ջրով, նախապէս տաշտի մէջ մի պողպատէ իր ձգելով, որ չարքերը չմօտենան, յետոյ մի բուռ աղ է դանում վերան ու խանձարուրում: Ապա գրկում է խանձարուրը, աջ ձեռքին բռնում թոնրի շիշը, մի ասեղ շուլուլում խանձարուրի մէջ և մի դանակ դնում վերան. ապա դուրս է գալիս, չէմքն անցնելիս խաշակնքելով խանձարուրին, դառնում գէպի արևելք, խաշակընքում է երեք անգամ և ապա մանում տուն, թոնրի շուրջը երեք անգամ պոտոյտ գալիս, և մօտենում ծննդկանին՝ երեք անգամ հարցնում:

Ես եմ թթթվ (թեթև) թէ դու:

Ծննդկանը պատասխանում է. Ես:

— Թեթևութիւնով անցնի, ասում է տատմայրը և երեխային դնում նրա աջ կողմը, և ապա երկու լոշ բերում, դնում է վերան, որ զսմթուրը լինի:

Յետոյ սկսում է խնամել ծննդկանին. մեղքը տաք ջրի մէջ է ածում, խառնում, տալիս խմելու, եղն ու փոխինդը խառնում է իրար, եփ տալիս և ուտեցնում: Մի քիչ յետոյ էլ «նուրկ» բանձարը հաւկթով ու իւղով տապակում են և ուտեցնում, որ սառն ճուն կարի:

Նաև թէյ են տալիս, շաքրաթ, չալըէ ճաշ (խաւիծ): Վերջինս պատրաստելու համար ալիւրը մի քիչ եռացրած ջրի մէջ խառնում են, և դադած իւղը լցնում վերան:

Եթէ նորածինը աղայ է՝ մեծ ուրախութիւն է պատճառում թէ՛ ծնողներին և թէ ազգականներին, իսկ եթէ աղջիկ՝ տխուրութիւն:

Տան երեխաները վաղում են ծննդկանի ազգականների մօտ և շանկնկալէն առնելով աւետում երեխայի ծնունդը: Սրանք էլ դանադան կերակրենք, ձուածեղ, փլաւ, դաթայ, սեր և մի եաղմա առած գալիս են ծննդկանին տեսութեան:

Գուշակութիւններ նորածնի մասին.—Նոր տարու օրը ծնած երեխան շաղէկ պտուղա է համարում:

Տեառնընդառաջին ծնուածը կրակոտ է լինում, տառմէքը գրկում է երեխային և տէրընդաղի շուրջը պտոյտ ածում, խանձարուրի կտորից վառում: Ծննդկանի քառասունքն էլ անցնում է, այլևս քառասունք չի պահում:

Աւաղ. Ուրբաթ օրը ծնուածը չաւարա պտուղա է, Յուգայ է: Ծննդեան և Զատիկի խթման երեկոյան ծնուած երեխաներն իմաստուն են լինում, ուստի և՛ մատաղ են անում և մատաղի թիակ ուկորը դնում են գլխի տակը, պահում, երեխան մեծանալիս՝ նայում է այս թիակի վրայ և գուշակութիւններ անում, կորուստ գտնում:

Գուշակութիւններ են անում նաև զննելով մանկան մարմինը. այսպէս՝

Եթէ գլուխը մեծ է—ջոջ գլուխ է, խելացի է:

Եթէ ճակատը լայն է, նոյնպէս խելացի է:

Եթէ երեխայի բուռը փակ է լինում, «կորաղ» է—ժլատ է լինելու:

Մկրտութիւն.—Երեխային մկրտում են սովորաբար ծննդեան առաջի շաբթում, և ոչ ավելի ուշ:

Սգաւորները մկրտութիւնը եկեղեցում չեն կատարում, այլ տանը:

Տառմայրը երկու դոյզ գուլպա, մինը մեծ, միւսը փոքր, մի գլուխ (3 ֆունտ) շաքար տանում է կնքահօր տուն և խնդրում, որ հետեւեալ օրը զան երեխան տգրկելու:

Տառմօրը մի շարքաթ են խմացնում:

Հետեւեալ օրը կնքաւորի դաւակը վերցնում է 10 դուրուշ դրամ, 1¹/₂—2 արշին դառիֆա կամ գետաղի կոշուած կտոր և դնում եկեղեցի:

Այս դաւառումն էլ քաւորութիւնը տոնմական է լինում, և յաճախ մի քանի հարիւր տարի տևում, այսպէս Տէր Սարգսնոց տոնմի քաւորները եղել են Մուխի Մկրտչնոց տոնմից երեք հարիւր տարիներից ի վեր: Եւ այս է պատճառը, որ երգուելիս տանում են «էն կուժ մէտոն» վկայ էղնի, այսինքն այնքան մեռն են բերել տուն երեխաներին մկրտելով, որ կարող է մի կուժ լցնել: Երբեմն քաւորութիւնը փոխադարձ է լինում և այս դէպքում քաւորը կոչւում է խալ-քաւոր:

Սանամայրը մեծ յարգանքով է վերաբերում դէպի իւր քաւորը, երբէք նրա հետ չի խօսում, նրա դռնից անցնելիս՝ սուրբը հանում է, այնպէս անցնում: Տառմայրը լողացնում է երեխային, փաթաթում և տանում եկեղեցի, նրա հետ դնում է մի երեխայ, տանելով մի փարչով տաք ջուր, այս փարչը կոչւում է կնքուփարչ: Կնքաւորը մի քանի փարայ նուէր է տալիս այս կնքուփարչ բերողին: Մկրտութեան խորհուրդը կատարելուց յետ՝ երեխային դնում են կնքաւորի գիրկն այնպէս, որ նրա գլուխը կընքաւորի աջ բազկի վրայ հանգչի, և սրա բերած խոտորւա գետաղի կամ ուստուֆա կոշուած կտորը ձգում բալուլի (խանձաբուրի) վրայ. սա նուէր է սանամօրը:

Մկրտութիւնից յետոյ քահանան փոքր ինչ ջուր է անում նոյն կնքուփարչի մէջ և մի քանի կաթիլ մեռն կաթեցնում և տալիս միկնոյն աղային: Քաւորը 5 դուրուշ վճարում է քահանային, 2 դ. յօգուտ եկեղեցու, 1 դ. տառմօրը, 1 դ. լուսարարին 1 դ. ժամհարին, ու թողնում գնում: Գնում է իւր գործին նաև քահանան և տառմէրը նորակնունք մանկանը դրկած վերագառնում է տուն, այստեղ ժայրը համբուրում է մանկան խանձաբուրը, և տառմէրը նրան դնում է մօր աջ կողմը, մի մկրտաի կամ դանակի վրայ բերնքսիվայր դրած մաղի վրայ, ուր մնում է մի քանի ժամ:

Կնքաճաշ, հրաւիրեալներ քաղաքում չեն լինում: Իսկ գիւղերում քահանան և կնքաւորը նորակնունք երեխայի հետ գալիս

են ծննդկանի տունը, ուր հրաւիրուած են լինում և աղամարդիկ ու կանայք, որոնց հիւրասիրում են Վնքաճաշ կոչուած ճաշով:

Աղջիկը 4—5, իսկ տղան 3 օր թողնում են մեռածի մէջ, ապա տատմայրը լուանում է մեռածած տեղերը մի մաքուր ամանի մէջ, յետոյ լողացնում: Մեռածի ջրից շինում են «մեռածի հոգ» — որ «մեռածն ունենա» — (սրբեն) երբ քրդեր ուտում են հայի ամանով կամ զգալով, ինչպէս նաև շան, մկան գիպած իրերը:

Եթէ երեխան անկնուած է մեռնում, քահանային 5 ղուռուշ են տալիս, որ խալ օծէ: Սա եկեղեցու ներսի պատի վրայ, որն է տեղ, մի փոքրիկ խաչ է կերտում և համաձայն Մաշտոցի կանոնի օծում, և կամ մի պղնձէ փոքրիկ խաչ է օծում և Աւետարանի կամ սրբերի պատկերների վրայ կապում և կամ դնում աւաղանի պատուհանի մէջ: Այսպիսով ուզում են յայտնել, որ նորածինը նուիրուած է եկեղեցուն, որն է սրբի, իսկ նրա դիակը տատմէն առանց քահանայի ու ծիսակատարութեան՝ տանում ձորը քաղում է:

Սովորաբար նորածնի անունն ընտրում են տան մեծերը, պապը, տատը և կամ քահանան:

Ահա ընդհանրացած անունները, իրենց կրճատ ձևով:

Տղամարդկանց անուններ

Արբաճաւ. Ափօ, Ապրօ.	Գասպար. Գարօ, Գալօ, Բեասօ.
Ալափերտի. Ալօ.	Գէորգ. Գէօ, Գեւէ.
Աղաբէկ. Աղօ.	Դանիէլ. Դանօ.
Աստուածատուր. Ասատուր, Աստուր, Ասփատուր, Ասօ.	Եղիազար. Եղօ, Եղիկ, Եղիա. Եզնիկ. Եզնիկ.
Արամ. Արօ.	Եղիշէ. Եղիշ.
Արեշառ. Արեօ.	Զաքար. Զքօ, Զգրօ.
Արմենակ. Արմօ.	Քաղէոս. Քաղիկ, Քաղօ.
Արշակ. Արշօ.	Քուճառ. Քուճօ.
Արտաշէս. Արտօ, Արտիկ.	Լևոն. Լեօ.
Արաւ. Արաօ.	Պարբով. Պարբօ, Պարբիկ.
Արփիար. Արփօ.	Կարապետ. Կրպօ, Կրպէ, Կարօ.
Աւետիս. Աւօ, Աւաօ.	Կիրակոս. Կիկօ.
Բաղդասար. Բղտօ, Բղարիկ.	Կիրեղ. Կիրեղ.
Բարսեղ. Բրսօ, Բարսամ.	Կորիւն. Կօրօ.
Բենիամին. Բէնօ.	Համազասպ. Համօ.
Գարրիէլ. Գարօ.	Հմայեակ. Հըմօ.
Գալուստ. Գալօ, Գալէ.	Մամիկոն. Մամիկ.

Մանիէլ. Մանօ.	Պօղոս. Պօղէ, Պօղիկ.
Մանուկ. Մնօ.	Ռուբէն. Յընօ.
Մարտիրոս. Մարտօ, Մատօ.	Սահակ. Սըհօ.
Մելքոն. Մելօ, Մըլքօ, Մելիք.	Սամուէլ. Սամօ.
Միսակ. Միսօ.	Սաղաթիւլ. Մաղօ.
Միքայէլ. Միքօ.	Սարգիս. Սըքօ, Սաքօ.
Միւթաբ. Միւթօ, Միւթօ, Միւթիկ.	Սենեքերիմ. Սինօ.
Մկրտիչ. Մկրօ, Մկրէ.	Սիսակ. Սիսօ.
Մովսէս. Մոսիկ, Մուսօ, Մոսէ.	Սմբատ. Սմբօ.
Մուկուչ. Մուկուչ.	Սողոմոն. Սողօ, Սաղօ.
Մուշեղ. Մուշ, Մուշօ.	Սուրէն. Սըբօ, Սուրիկ.
Մուրատ. Մուրատօ, Մուրօ.	Ստեփան. Ստեփօ, Սեփօ,
Յարէթ. Աբէթ.	Սեփան, Սափէ.
Յարութիւն. Յարօ, Յարթէն,	Վահան. Վանօ, Վանիկ.
Յարթօ.	Վաղաշակ. Վաղօ.
Յոնան. Յունօ.	Վարդան. Վըրթօ, Վրթէ, Վերդօ.
Յովաննէս. Յովնիկ.	Տարօն. Տարօն.
Յովան. Յովօ.	Տիգրան. Տիգօ.
Նահապետ. Նըհօ.	Տիրան. Տիրօ, Ճիրօ.
Շաւարշ. Շաւէշ.	Տրդատ. Մոզատ.
Շահէն. Շանօ.	Տօնապետ. Տօնիկ, Տօնօ, Դոնիկիկ.
Պետրոս. Պետօ,	

Կանանց անուններ

Ալիբ, Ալօթ.	Զարուհի, Զարօ.
Ալթուն, Ալթիկ.	Զմբութ, Զմօ:
Աղբութ, Աղբութ.	Քազուհի, Քազուն, Քազօ.
Անգին, Անգօ.	Քուիիկ, Քուիսօ, Դուիսօ, Դոիիկ.
Աննա, Անօ, Աննիկ.	Իւղարեբ, Իւղօ.
Աշխէն, Աշխէ.	Լուսիկ, Լուսօ, Լուսիկ.
Արեգնազան, Արեգնազ, Արեգ.	Պամար, Պամար.
Արուսեակ, Արուս.	Պանիկ, Պանօ.
Բեզօ, Բեզօ.	Պանուժ, Պանօ.
Գիւրջի, Գիւրջօ.	Պուժար, Պուժի.
Գիւլիգար, Գիւլօ, Գիւլի.	Մաղիկ, Մաղիկ.
Դեղձանիկ, Դեղցուն, Դեղօ.	Հայկանոյշ, Հայկօ.
Եղիսարէթ, Եղսօ, Եղսօ.	Հաւսէ, Հաւսօ.
Երանուհի, Երանուհի, Երան.	Հերթնազ, Հէրօ.
Զանազան, Զանօ, Զանէ,	Հոիփսիմէ, Հոսոմսիմա, Հոսոմ.
Նազան, Նազօ.	Մանուշակ, Մնուշ.

Մարիամ, Մայրօ, Մարօ.	Սարընգուլ, Սարընգուլ.
Մարմար, Մայմօ.	Սիրանոյշ, Սիրօ.
Մաքրուհի, Մաքէ, Մաքօ.	Սուրժիկ, Սուրժօ, Սրմօ.
Նարգուհի, Նարգան, Նարօ.	Սրբուհի, Սրբուն.
Շողակաթ, Շողօ, Շողիկ.	Վախաւ. Վախաս.
Շուշանիկ, Շուշօ, Շուշան.	Վարդուհի, Վարդօ.
Սաղաֆ, Սաղաֆ.	Տիրուհի, Տիրուն.
Սաթնիկ, Սաթէ, Սաթօ.	Քիչմիշ, Քիշօ, Քիշմօ.
Սալվի, Սալօ, Սըլվօ.	Ֆիդան, Ֆիդօ:
Սառէ, Սառօ.	

Մենդականի մօտ ծննդեան երեկոյից սկսած եօթն, ինչպէս և մկրտութիւնից մեռանհանէքը հինգ, զիշեր ճրագ են վառում:

Քառասունը—Մենդկանը քառասունք է պահում արեւից և անկողնուց, այսինքն արևի երես չի տեսնում,—ցերեկով տանից չի դուրս գալիս, առադաստ չի մտնում:

Եթէ քառասունքի մէջ երեխայի վիզն ուժեղ չլինի, և դըլուխն այս ու այն կողմն ընկնի, մի հաւ են մատողում, և սրա վիզը խփում մի սեան ճեղքի կամ դռան դրանդիքի մէջ, հաւատարմով, որ մինչև հաւի վիզը չորանալը՝ կըպնդի, կուժեղանայ նուև երեխայի վիզը:

Երբ քառասունքը լրանում է, տատմէրը գալիս է՝ լողացնում նախ ծննդկանին և ապա երեխային, և վերջինիս վերայ քառասուն ճանկ ջուր ամում, ապա վերցնում է երեխային, վերան մի դանակ դնում, իւր ձեռը մի շիշ ամնում և դուրս գալիս, դառնում գէպի արեւը, խաշակնքում, աղօթում. ապա ներս է մտնում, խանձարուրը դնում օրօրոցը և ինքը կուժն ու մի հաց վերցնում, դնում աղբիւր. այստեղ հացը թռչում է, երկու կտոր ամում, դնում աղբիւրի գլուխը և յետոյ կուժը ջրով լցնում, գալիս:

Մանկատուծութիւն.—Նորածնին առաջին երեք օրը ծիծ չեն տալիս, որ խելացի լինի: Առաջին անգամ ծիծ տալիս, նախ մի արծաթէ իր կամ դրամ դնում են երեխայի շրթունքներին վրայ, որ դարձաթով բացուի բերանը, այսինքն հարուստ լինի և ապա ծիծ են տալիս:

Նախ աջ ծիծն են տալիս երեխային, յետոյ ձախը, որ ողջ մնայ:

Երեխային ծիծ են տալիս 1—3 տարի, և կամ մինչև յառնալը:

Սակաւակաթ մայրերն երեխային կովի կաթ են տալիս, նրա ^{3/8} յօի չափ ջուր և փոքր ինչ շաքար խառնելով և եռացնելով:

Ծծից կտրելիս՝ պղպեղ և կամ մուր են քսում ծծի պակին,

երբեմն ձուկ, կատուի պոչ են դնում ձծի վերայ և վախեցնում երեխային ասելով. «Արջաբլօ» (արջ և բլօ—միջատ), բուրձն կուտէ գրեգրէ:

Եւ կամ Ակլատիդ,

Զվանը վիզ,

Կըզայ կախուի յերթըկէն:

Վախեցնում են նաև սարդով, որին պատաւ են անուանում. «Տես, պատաւ ուր կծիկ թորկեց, քեզի կաննէ ու կը բարցրցու»:

Երբ երեխան մեռնում է, մայրը ձեռները դնում է ձծերի պատուկների վրայ և երեք անգամ ասում. «Բու տէր մեռաւ՝ դու չէ մեռնէ»: Ապա ձծերը դնում է կփի վրայ և սանրով սանրում՝ որ ցամաքի:

Եթէ կաթը շատ է՝ թոնրի մոխիրը հանում են և սրա վրայ կթում ձիւժը. եթէ ուրիշ բանի վրայ կթեն՝ կը ցամաքի:

Կաթը անխաղնելու համար մայրը հատիկ է պատրաստում, այսինքն ցորեն, սիսեռ և աւաշյաւ է խաշում, հետը չամիչ խառնում,— և դնում Կաթնաղբիւր կոչուած սուրբ աղբիւրները, նստում աղբիւրի հանդէպ, մով վառում, և օրը խմում, հատիկ ուտում, և առանց յետև նայելու վերադառնում:

Կնոջ կաթը իըրեւ դեղ գործ են ածում, երբ մինի աչքերը ցաւում են: Միայն աղջիկ երեխայի մօր կաթն է իրը դեղ գործածում և ոչ թէ արու երեխայի:

Վէրքերի վրայ ևս կթում են աղջկայ մօր կաթը որ լաւանայ:

Եծի կաթը կաթեցնում են շըշող ականջի մէջ և խմորով պատելուց յետ՝ ականջի ծակի մէջ դնում են մոմով պատած մի շոր՝ ձաղառան և ոլորած, և վառում, որ միջի կեղան ու ցաւը քաշէ. հանէ:

Օրական երեք անգամ խանձարուրում են երեխային:

Երեխային օրօրոց են դնում միայն մեռածից հանելուց յետոյ:

Առաջին անգամ օրօրոց դնելիս՝ օրօրոցը հանում են դուրս, արևին ցոյց տալիս, երեխային էլ նրա յետևից դուրս են հանում և բերում ներս, լողացնում ու դնում օրօրոց:

Երեխային լողացնում են մինչև քառասունը ամեն օր, իսկ նրանից յետոյ շաբաթական երկու անգամ, հինգշաբթի և շաբաթ օրերը:

Քառասունքից յետոյ ձեծած շիպը իւզի հետ խառնում են և երեխային լողացնելուց յետ քսում մարմնին, խանձարուրում:

Պաճարուրելիս՝ աղի տակ տաքացրած հոգ են դնում, և կամ զլուլայ—փայտէ խողովակ, որպէսզի մէզը նրա միջոցով թափուի օրօրոցի տակը:

Լողացնելիս ասում են.

Ձուչամբսիկ, չուչամբսիկ,
Թեթվամսիկ, Թեթվաջրիկ,
Յերկէն վզիկ, յերկէնվզզիկ,
Ջաղամաթի քունը քրզիկ:

Եւ առաջի միջից մի բուռ Զուր վերցնելով խաչանն ցնցում են օրօրոցի վրայ, խաչանն քելով: Եւ երբ երեխան քնում է, առաժայրը իւր ոտի մատը խփում է առաջի ջրի մէջ և ապա երեխայի շորերը լուանում մէջը:

Մինչև երեխայի քնելը առաջի Զուրը չեն թափում, հաւատարով, որ եթէ Զուրը չարժուի, երեխան էլ կը չարժուի, չի քնի: Որպէս զի երեխան երկար քնի, քառասունքից յետոյ հայրն ու մայրը առանձնապէս լուանում են իրենց երեսները երեխայի գլխու վրայ, որպէս զի իրենց քունը նրան փոխանցուի:

Երկար քնելու համար շխաժութիկն—ճկոյթի ծայրով—ձէթը կաթեցնում են ձէի կաթի մէջ և լցնում երեխայի բերանը:

Շապիկն հագցնելիս երեք անգամ ասում են.

Տապրակիկ հլին (լեցուն) մսիկ,
Տապրակիկ հլին մսիկ:

Երեխայի եղունգները հրեշտակն է կտրում, այս պատճառով էլ մինչև 3 տարեկան դառնալը դանակ չեն խփում նրա եղունգներին:

Առամսները բշտելիս առիս են տալիս, որ կրծ է երբ չորս տատմ հանում է՝ ակոսասորիկ կամ ըստ քաղաքի ակոսանատիկ են անում — չամիչ, սիսեռ, ցորեն խաշում են, լցնում երեխայի գլխին, և սանտր ու դանակ դնում առաջը, եթէ սանտրը վերցնէ՝ աղջիկ, իսկ եթէ դանակ՝ աղայ է լինելու սրա յաջորդը:

Երեխային ման գալու վարժեցնելու նպատակով զործ են անում եռանիւ սայլակ, որ զոնէլ է կոչւում:

Եթէ երեխան ուշ է ոտք ելնում, ոտի բթերը կարմիր թելով կապում են և դանակով կտրում, կրկնելով այս գործողութիւնը երեք անգամ, որպէս զի աղայի ոտքերը բռնող թելն էլ կտրուի և նա ոտք ելնէ:

Եւ կամ երեխային երեք անգամ լողացնում են շան լակամանի մէջ, որպէս զի շան վազելու յատկութիւնը երեխային փոխանցուի:

Լեզու չեղնող երեխայի մայրը իւր խմորոտ ձեռների լուացալուրը խմացնում է երեխային, որ շուտով ոտ ելնէ:

Նոյն նպատակով եկեղեցու բանալին կամ մի աղեղեղիկ մարդու ճկոյթ երեք անգամ դնում են երեխայի բերանը:

եթէ երեխայի մազերը ցանցառ են լինում՝ ոչխարի կու են քսում:

Երեխան ցառանկակոխ է լինում, երբ մի ծննդական դեռ քառասունքը չլրացրած գնում է մի ուրիշ, նորն վիճակի ծննդականի մօտ: Այս դէպքում, որպէս զի բժշկեն երեխային փոխանակում են երեխաները և ծիծ տալիս և խանձարունների վրայ եղած ասեղները փոխում, նաև երկուսն էլ գողանում են խանձարունների տակ դրուած հողից, լցնում տաշտի մէջ և երեխային լողացնում նրա մէջ: Երեխաների շապիկներն էլ վերցնում տանում են միւսի տան հերթիկից թափ տալիս՝ ասելով, «Բու՛նն առ, գի՛մուն տուր»:

Աղիսում երեխային տանում են գերեզմանատուն և այդ տեղ պառկեցնում մի գերեզմանաքարի վրայ ու փորին մի քար դնում. եթէ երեխան շարժուելով քարը վայր է ձգում՝ նշան է որ առողջանալու է, իսկ եթէ ոչ՝ մեռնելու է:

Օրօրոցի կամարից կախում են «զզի շարսն» — այսինքն ընկոյզի շարան, — Թելի վրայ ընկոյզ, աչքի ուլունք, Զախաքրիկ — կապոյտ, տափակ ուլունք — որպէսզի երեխային աչք չտան, ինչպէս նաև վէզեր:

Երբ մինի երեխաները չեն ապրում, ասում են, թէ ծնողները թաղոտ են, թըպըղը մի որդ է, որ ճանկեր ունի և բռնում է երեխայի, սրա հօր և կամ մօր լեարդը:

Թաղից ազատուելու համար նորածին երեխայի մարմինն և նոյնիսկ յրթունքներին ու ականջներին մեղր են քսում, և երեք-չորս օր ծիծ չեն տալիս: Քաղցից նեղուելով թըպըղը դուրս է գալիս որ երեխայի յրթունքների մեղրը ծծէ, այս միջոցին բռնում են նրան, որով և ազատում երեխային: Այդ բռնած թըպըղը դնում են մի տուփի մէջ, պահում և երբ ուրիշ թաղոտ կանայք յղանում են, այս թըպըղը արորում են, լցնում ջրի մէջ և խմացնում նրան, որպէս զի առողջանայ:

Եթէ թաղից երեխաները չեն ապրում, գրկիցներից մի կին փախցնում է նորածինն, ինքը առաջին անգամ ծիծ տալիս և երեք օրից յետոյ բերում տալիս մօրը:

Թալցնող երեխայի շապիկը կրծքի բացուածքի կողմից պատում են, և գլխի վրայով շուռ տալիս, կամ տանում «Թալալոց» քարերի ծակից անց կացնում, այդպիսի քարերի վրայ կերակուր եփում, ուտեցնում երեխային:

Յաճախ մայրերը մեծ պասի առաջի շաբաթ օրը «Թալալոցի» կերակր են պահում, որպէս զի երեխաները չթալալին:

Խնջոտ երեխան խելացի է լինում, այս պատճառով էլ ասում են.

Ելինք ի գայ՝ խելք կը բերայ:

Եթէ երեխայի ծոծրակը համբուրեն, աս խոռովկան կը լինի:

Եթէ ձեռքի երեսը համբուրեն, կը հիւանդանայ:

Եթէ ուքի տակը համբուրեն՝ շատ ուշ ուք կ'ենէ:

Եթէ կուրծքը համբուրեն՝ խիթ (սանճու) կուեննայ:

Մանկական թոթովանք.— Մամ—մայրիկ ճիճի—խաղալիկ

Բարուկ—կոշիկ Նանէ—մեծ մայր Թաթօն—ձեռք

Բըժօ—ճրագ Կակօ—հորեղբայր Տօտօն—տաներ

Դըզ—կրակ Գապ—հայր Կօկօն—գլուխ

Դաղաղըմփ—Թմբուկ Փափո—հաց Տուտուկ—տուն

Լուլու—մէջ, միդել Քեռիկ—լուսնիակ Փչօն—կատու

Բշիկ անել—քնանալ Կա—կա—միքզ Կուտօ—շուն

Դարդար—քնանալ Ֆու—ջուր Ճուճու—հաւ

Բուրիկ—օրօր Ուֆու—կերակուր Զաչօն—աչք

Օւօ—կով, Մծիկ—ծիծ Դըզան—տատմ

Օշէ—էշ Դաղաշ—ձի Ճնճուկ—թռչուն

Պիպօ—հորթիկ Կըդէ—այծ Լըոօ—գառ

Բօրօն—միջատ Քըխ—կեղտոտ Ափ էնել—ուտել:

ՄԱՀ, ԹԱՂՈՒՄՆ ԵՒ ՄԵՌԵԼՈՑ

Մահ.—Հիւանդին այցելելու սովորութիւնը բաւական տարածուած է: Այցելուն յաճախ բերում է իւր հետ հիւանդի կամակ՝ խնձոր, նուռ, չամիչ, սերկէիլ, կաթ, մածուն:

Եթէ հիւանդութիւնը երկար է տևում, հաց են թխում և արշալուսին տանում եկեղեցու դուռ՝ անցնող դարձողին բաժանում են մի մի հատ, ով էլ որ անցնի, հայ, թուրք, բուրդ, որպէսզի հիւանդը շուտ առողջանայ և կամ մեռնի:

Նոյն նպատակով բերել էին տալիս Մուշ քաղաքի Վերին Թաղի Վե Աւետարանը և կամ Զորոյ Թաղի Շէկ-Աւետարանը, իսկ Վարդինիսում Տէր Թարութիւնի տան Վարմիր: Բաւարանը, հիւանդի վրայ կարդալու:

Որպէսզի գուշակեն, թէ հիւանդն առողջանալու է, թէ մեռնելու, դիտում են հետեւեալ միջոցները.—

Դիտում են, եթէ հիւանդը շարունակ պէտում է քիթը և կամ պէկում մատները, նշան է, որ պիտի վախճանուի:

Եթէ հիւանդութիւնը յաճախ կրկնուում է, նշան է՝ որ կը մեռնի:

Եթէ կատուն նստի հիւանդի վրայ, նշան է՝ որ աս պիտի առողջանայ, որովհետեւ կատուն նրա ցաւը քաշում է:

Եթէ հիւանդի բիթը չափազանց նիհարել է, նշան է, որ մեռնելու է:

Եթէ երազում տեսնեն, որ տան սիւնը կոտորուել է, կամ տունը փուլ է եկել, և կամ աստաժը քաշել են, նշան է որ հիւանդը մեռնելու է:

Եթէ հիւանդի մարմնի վրայ կապոյտ բծեր լսուէրք երեի, նշան է, որ մեռնելու է, որովհետեւ դրանք շար զարկն են, չարերը—սատանաները խփել են:

Ծանր հիւանդին Հաղորդութիւն են տալիս:

Եկեղեցում «Տէր ողորմեա» ասելու համար ծանուցում է տնում քահանան:

Հոգեվարքի միջոցին զապում են իրենց լացն ու կոծը, որպէսզի հոգեդարձ չանեն: Հոգեդարձ լինողը մի քանի օր էլ ապրում է սոսկալի տանջանքներով:

Մեղաւոր մարդը շատ դժուարութեամբ է հոգին աւանդում, մինչդեռ արդարը հեշտութեամբ:

Երեխաներին հրեշտակը խափում է խնձոր կամ ծաղիկ ձեռքը տալով, այս պատճառով էլ սրանք հոգին աւանդելիս ձեռքերը շարժում են:

Հէնց որ հիւանդը մեռնում է, անմիջապէս ձեռները կրծքին խաչում են, ոտները ուղղում, աչքերը փակում և երեսը դէպի արեւելք դարձրած պարկեցնում և մի մոմ վառում, դնում սնարի մօտ: Յետոյ հրաւիրում են քահանային, որ հոգոց աթի:

Ապա՝ եթէ աղամարդ է՝ ժամակոյժ, իսկ եթէ կին՝ տամէրը և կամ հարկան, աղքատ կանայք, լողացնում են: Զուրը տաքացնում են, եկեղեցուց բերում են յատուկ պատրաստուած և ըստ մեռելների համար գործածուող լծակի լողացնելու տախտակը, որ կոչւում է ԺՈՒՂ: Սա հետզհետէ նեղացող մարդաչափ տախտակ է, ամբողջած չորս ոտների վրայ, որոնցից երկուսը փոքր ինչ աւելի բարձր են. տախտակի երես կողմը նեղ տախտակով պատած է. որ լցուած ջուրը կողքերից չթափուի:

Լողացնելու ջուրը քահանային օրհնել չեն տալիս: Աւելացած ջուրը թափում են, կաթսան բերընքսիվայր կորզում: Այստեղ մոմ վառելու սովորութիւնը չկայ:

Առանց չափիկ ու վարտիկ հագցնելու՝ պատանքում են, աւանդներին և պընչի մէջ բամբակով պատած խուռնկ են դնում, իսկ բերնին վարշամակ, որ քահանան տանը օրհնելով կտրում, տալիս է:

Երբեմն ննջեցեալի կինը, մայրը, քոյրը կտրում են իրենց մազերը և դնում ննջեցեալի սրտի վրայ:

Ապա պատանքն ամբողջովին կարում են, բայց չթողնելով նոյն իսկ երեսի մասը: Կանանց գլխին, պատանքի տակից եազմա են կապում: Ապա նոյն պատանքի կտորից մի գօտի կապում են մէջքին, նախապէս գօտու մէջտեղում մի հանգուստ գցելով: Պատանքի աւելացած կտորը փաթաթում են տան սեանը և յետոյ տալիս մեռել լողացնողին:

Գիւղերում ննջեցեալի ձեռների մէջ նշխարք և խունկ են դնում:

Երեխաների ձեռքին մոմ դնելու սովորութիւնը չկայ, սակայն ոմանք նախքան լողացնելն ու պատանքնը մի վառած մոմ են կանգնեցնում սրանց ձեռքում:

Երիտասարդ և շատ սիրելի ննջեցեալին շորեր են հագցնում, և վրայից դարձեալ պատանք կարում, ամբողջովին ծածկում:

Դազազ Թէ գիւղերում և Թէ քաղաքում շատ հազիւ է գործածւում, այն էլ չափազանց պարզ, տախտակների վրայ կտոր անգամ չեն քաշում: Եկեղեցիներում պահում են նաժ, որը տանում են և ննջեցեալին դնում մէջը, նախապէս փաթաթելով Զնջի մի մէջ և որեւէ հանգերձ ձգում վերան, որ ծածկուի: Նաժին ասում են նաչ կամ ձազառ:

Գիւղերում շատ հազիւ է պատահում, որ պատարադ մատուցանեն և ապա Թաղեն ննջեցեալին, իսկ քաղաքում մեծ մասամբ այդպէս է կատարւում:

Ննջեցեալին շատ երկար չեն պահում, հազիւ մի օր, մի երկու ժամ:

Ննջեցեալի բարեկամներն ու ծանօթները հաւաքւում են տան մէջ, քահանան կատարում է Թաղման կարգը և ննջեցեալին տանում են եկեղեցի: Այս միջոցում նրա դազաղի տեղը մի քար են դնում, որպէսզի նրա յիշատակը հաստատ մնայ: Կանայք չեն դնում: Այս միջոցին քահանան յետ չի նայում, որպէսզի այդ տնից ուրիշն էլ չմեռնի: Նաժը վերցնելիս երեք անգամ բարձրացնում, վայր են դնում, և ապա վերցնում: Դազաղի յետեից փոքր ինչ հող են ձգում, որպէսզի նոյն տան ցաւն ու չոռը հետը տանի:

Կանայք ոչ ուղեկցում են ննջեցեալին տանից դէպի եկեղեցի, ոչ էլ յետոյ Թաղման պատարագին և կամ գերեզմանատուն տանելիս դնում, այլ տանը հաւաքուած սգում են:

Եկեղեցական կարգը կատարելուց յետոյ, ննջեցեալին՝ եթէ նաժի մէջ է դրուած, ուսերին, իսկ եթէ դազաղի, ձեռներին բռնած տանում են գերեզմանատուն: Եկեղեցում գանձ ասելու

և կամ խաշահամբոյր հաւաքելու սովորութիւնը կամաց կամաց վերանում է:

Ննջեցեալին տանելիս հիւանդները դուրս են գալիս իրենց տան դուռը և պառաւ կանայք դուրս են բերում սրանց շորերը և թափ տալիս մըմնջալով:

Թիւ, թիւ, թիւ,
Մեռել մեռելացին,

Յետ երթաս, առաջ չի գաս,
Տուշմիս դուռ չի գաս:

Թիւ, թիւ, թուքն ի երես,
Չար սատանէն սև երես,

Առնեմ գշուլ, վերցնեմ գշոր,

Չար հրեշտակներ թափելն ի հուր:

Եւ այս բոլորը այն նպատակով, որ ննջեցեալը հիւանդի չոտն ու ցաւը իրեն հետ տանի:

Գերեզմանը փորում են տոճական գերեզմանատանը, ազգականների մօտ, որովհետև հաւատում են, որ ուր թաղուեցաւ մի՛նը, նոյն տեղի ննջեցեալների հոգիների հետ կը լինի և երկընթում:

Գերեզմանը փորում են գիւղերում՝ հարեանները, որոնց միայն հիւրասիրում են ճաշով, իսկ քաղաքում՝ վարձկան մշակներ:

Կանանց և քահանաների գերեզմաններն աւհամեմատ աւելի խոր են փորում: Պատմում են, թէ եթէ մեռած քահանայի ճկոյթը կտրեն, ինչ կողպած դռան որ մօտեցնեն, կողպէնքը կը բացուի, այդ պատճառով և նրան խորն են թաղում, որ չկարողանան բանալ և կտրել:

Գերեզմանի խորութիւնը լինում է մօտ երկու արշին:

Քահանան իւր բռի մէջ օրհնում է հող և ձգում գերեզման, մօտիկ մի ազգական մտնում է գերեզմանի մէջ. առնում բուրվառը, երեք անգամ խունկ ձխում, ապա գրկում ննջեցեալին, հանելով նաշից. պարկեցնում գերեզմանի մէջ, կրկին առնում բուրվառը, և խունկ ձխում:

Յետոյ նրան քաշում, էանում են և գերեզմանը հողով լըցնում: Պարտք չի համարում, որ իւրաքանչիւր յուզարկաւորող մի բուռ հող ամի ննջեցեալի վրայ: Գերեզմանի վրայ թումբ կազմելուց յետ տիրացուն թմբի վրայ մի փոս է անում և բուրվառի կրակը ամում մէջը: Յուզարկաւորողները համբուրում են քահանայի ընծած աւետարանը, մօտենում են սգուորենքին և ձեռքը դէպի հակառակ տանելով ասում. «Սուրբ Հոգիով միտթարիս» կամ գիւղերում՝ «Գլուխդ անուշ մնայ, Աստուած զհոգին յուսաւորէ, արեն էղնի մնացածներուն: Ոմանք էլ երեք անգամ խոնարհում են դէպի գերեզմանը և ասում. «Աստուած քու հոգին յուսաւորէ: Ապա համարեա բոլոր յուզարկաւորողները քա-

հանայի առաջնորդութեամբ գալիս են ննջեցեալի տունը, ուր քահանան Հոգոց է ասում, որից յետոյ յուղարկաւորողներն սղգւորներին հղուելոց անուշ ձայն առնելով հետանում են։ Թոււմ են քահանան, տիրացուները և ժամկուշը, որոնց ճաշ են տալիս։ Այս ճաշից յետոյ, հարեան և աղագական կանայք զանազան ուտելիքներ սեր, մածուն, ձուածեղ, ձու, երբեմն նաև կերակուրներ ասած գալիս են սգատուն, մի քիչ լալիս։ յետոյ սգուորը արդէն պատրաստած է լինում ճաշ, հրաւիրում են ճաշելու և այս կանանց բերած կերակուրներն էլ դնում են սեղանին։ Միայն կանայք ճաշելուց յետոյ ցրում են, միմիարական խօսքեր ասելով, և համբուրելով սգուորների ձեռքը՝ եթէ մեծ է, կամ երեսը՝ եթէ փոքր է։

Նոյն երեկոյնս քահանան եկեղեցու մէջ անբիծք է կատարում և տիրացուների, ժամկուշի ու մի քանի աղքատների հետ գալիս է ննջեցեալի տունը, ուր ընթրում են, հոգոց ասում։ Եօթն օր շարունակ քահանան այսպէս պարտաւոր է գալ մի քանի աղքատների, տիրացուի և ժամկուշի հետ ընթրելու և հոգոց ասելու։ Նախապէս եկեղեցում անբիծք կատարելով։

Այդ թաղման երեկոյին կանայք կրկին գալիս են, բերելով իրենց հետ մի մի ձիթի ճրագ, որ դնում են ննջեցեալի հոգին աւաղած տեղում բերնքովայր դրուած առշտի վրայ և վառում, թողնելով վառ մինչև լոյս։

Նոյն երեկոյին աղամարդիկ ևս գալիս են միմիարելու։ Ո՛չ կանայք և ո՛չ աղամարդիկ չեն հիւրասիրում ընթրիքով։

Մուշ քաղաքում, ինչպէս և գեղերում, սգուորների մեծը մոռի կամ սև եազմաներ է աւծում և ձգում բոլոր մօտիկ ազգական կանանց գլխերին, իսկ եօթը տալուց յետ քաւորկինն ու խնամինները մէկ մէկ գլուխ շաքար ու սգուորների թուին համեմատ կարմիր եազմա են բրում և սև եազման վրջնելով, միմիարանք խօսում, և այս կարմիր եազմաները ձգում։ Իսկ ննջեցեալի մայրն ու կինը չեն փոխում իրենց եազման, մինչև որ տարին կամ մի քանի տաղաւար չի անցնում։

Մուշ քաղաքում բուրվառի երակը գերեզմանի թմբի վրայ անելու սովորութիւնը չկայ։ Բոլոր յուղարկաւորողներն անմիջապէս ցրում են և կամ գնում սգատուն, ուր դրացիներից կամ դրացի խնամիներից մինը պատրաստի կերակուրներ է բերում, և ճաշով հիւրասիրում սգուոր աղամարդկանց ու կանանց, ինչպէս և յուղարկաւորողներից ձագողներին։ Նոյն օրը կանայք չեն գալիս կերակրներով և կամ երեկոյին՝ ձիթի ճրագներով, ինչպէս անում են գեղերում։ Նոյն երեկոյին միայն աղամարդիկ

գալիս են սգատուն, քահանան հոգոց է ասում և անմիջապէս հեռանում: Քահանային ընթրիք տալու սովորութիւնը նոյնպէս չկայ: Եկեղեցում եօթն օր անընթեք ասելու սովորութիւնը քաղաքում չկայ, միայն քահանան թաղման և այգու երեկոներին սգատուն է գալիս և հոգոց ասում:

Սովորութիւն է նաև, որ սգոյ ճաշերին ոչ սկզբում և ոչ վերջում ձեռք չեն լուանում:

Սօթ կատարել.—Թաղման եօթերորդ օրը, բայց երբեմն էլ ասելի վաղ՝ չարաթ օրը կատարում են եօթնէից կարգը, որ ասեղական բարբառով կոչում է յեզդոյը: Պատարագ են մատուցանել տալիս, քաւորը կամ մի ուրիշ ազգական գալիս սրգուտը տղամարդկանց տանում է եկեղեցի, որի աւարտման ժամանակ գնում են գերեզմանատուն, և կամ, եթէ եղանակը վատ է, եկեղեցու մէջ կատարում եօթնէից կարգը: Սըգուտը հրաւիրում է եկեղեցիին սգատուն, և հիւրասիրում ճաշով: Անպատճառ հրաւիրում են նաև գերեզման փորողները: Գիւղերում անշուշտ հերիսս են պատրաստում, իսկ քաղաքում 10—20 տեսակ կերակուրներ և 50—80 ամաններ մէջ ամած բոլորը միաժամանակ շարում սեղանին, ով որ կերակրից ուզում է՝ ուտում է:

Եօթնէից հասը ուտելուց յետ, ժամարը բացի այն՝ որ ինքն էլ միւսների հետ ճաշում է, այնուամենայնիւ մի աման կերակուր և երկու հաց է ստանում, իբրև ննջեցեալի բաժին և տանում իւր տուն: Տղամարդիկ ճաշելուց յետ ցրւում են. մնում են միայն մտերիները, որոնցից քաւորը կամ սանահէրը հրաւիրում է սափրիչին ու խնդրում սափրել սգուտը տղամարդկանց մօրուքը և խուզել գլուխը: Սրանից յետոյ միայն սգուտը տղամարդիկ շրջապատուած այս մտերիներով, գուրս են գալիս տնից և գնում իրենց խանութ կամ գործատեղին:

Նոյն օրը, ճաշից յետոյ, գալիս են նաև կանայք, որոնցից քաւորկիներն ու խնամիները բերում են իրենց հետ մի մի գլուխ շաքար և մի մի կարմիր եազմա: Երեկոյեան դէմ, ժամասացութիւնից առաջ սգուտը կանայք ձգում են իրենց ուսերին ու գլխներին ննջեցեալի շորերը և եկած կանանց հետ գնում գերեզմանատուն, օրհնել տալիս գերեզմանը, լալիս, ողբեր ասում, և ապա վերադառնում տուն, ճաշում:

Ճաշից յետոյ, բերուած կարմիր եազմաները ձգում են սըգուորների գլխներին, վերցնելով սև եազմաները, սակայն ննջեցեալի մայրը և կինը չեն համաձայնում, նրանք երբեմն մի ամբողջ տարի կրում են սև եազման, իբրև սգի նշանակ: Հետաւոր տեղերից, խնամիների տնից եկած սգուորներն այդ օրը վերադառնում են:

Եօթնէից երեկոյին, կամ մի քանի օր յետոյ, ննջեցեալի շորերը տալիս են քահանային իբր կողոպուտ, հասուցանելով միանգամայն և թաղման վարձը—քաղաքում՝ 10 դուրուշից մինչև մի ոսկի, գիւղում՝ 5—20 դուրուշ, Գիւղերում այս շորերը յանձնում են իրենց թեմի վանքի վանահօրը՝ իբրև կողոպուտ և մի ոչխար կամ եզ՝ իբր հոգեբաժին:

Ազուր կանայք քաղաքում տանից չեն դուրս գալիս—արև չեն տեսնում—մինչև որ մի խթում չի անցնում, այսինքն մինչև որ Մննդեան կամ Յարութեան տօնը չի կատարուում: Այդ խըթման երեկոյին բարեկամ ու ազգական տղամարդիկ գալիս մխիթարած են խօսում, տանք շնորհաւորում. քահանան էլ անպատեառ սեղանակից է լինում:

Սգի բաղնիք.— Եօթնէից մի քանի օր յետոյ քաւորկիներ կամ սանամէրը սզուր կանանց տանում է բաղնիս, լողացնում և հիւրասիրում բաղնիսի մէջ իւր տանից բերած հաւկթով, գաթով, հալուով, դաւուրճայով և մրգերով, միանգամայն վճարելով բաղնիսի ծախսը: Իսկ եթէ սզուրը չի ուզում տնից դուրս գալ, նայն ամենքը փայտ ու սապոն են բերում սզուրի տունը և այստեղ նուր տաքացնում, լողացնում:

Ննջեցեալի թաղման քառասներորդ օրը մի առանձին ծէս, քառասունք չեն կատարում:

Սզուրներն արևով դուրս չեն գալիս, և եթէ ստիպուած են գնալու մի նոր ննջեցեալի տուն, գիշերով են գնում:

Տեսնենդառաջին քաւորկին ու սանամէրը և կամ խնամի, դրացի կանայք գալիս են սզուրներին տուն և ստիպում երեկոյեան ժամասացութիւնից յետոյ դուրս գալ գաւիթ ու ներս մտնել, որպէս Տիրոջ ընդ առաջ, որից յետոյ նրանք արդէն կարող են արևով էլ դուրս գալ:

Մեծ պատի առաջին օրը, երեկոյեան, տղամարդիկ այցելում են սզուրներին մխիթարելու: Մովորաբար տում են. Շնորհաւոր պատ, պատ ազօթք իզայ ձեր վրէն, ձեր յորդինհրուն (որդիներին), ամէն տարի ուրախութիւնով հասնիք էս օրս:

Միջինքին (Մեծ պատի) սովորութեան համեմատ ամէն տուն շաւրեղիք*) է պատրաստում, սակայն սգատներում այս չեն տնում. բարեկամ կանայք պատրաստում են և այդ երեկոյ տանում նրանց:

Աւագ հինգշաբթի օրը ամէն տուն թրթիւմօրը թաժացնում է (նորոգում է), հաց է թխում, երեսին կանեփ քում: Սգա-

*) Ձիթով պատրաստած բազարջ, երեսն ընկոյզով և քիչմիով դր-գարուած:

անհրուժ այդպիսի հացեր աւելի շատ են պատրաստում: Քաւորկին, սանամէր, խնամիներ և մօտիկ ազգականներ այդ հացերից առնուազը շօթ ֆուխտ ու թաք (15) և կամ մինչև 50—60 հատ վեցնում են ու երեկոյեան գնում սգատուն, սգուոր կանանց տանում եկեղեցի (Սգի գիշերը), և այստեղից գերեզմանատուն: Սգատնից բերւում է այստեղ բաւականաչափ հացեր, որոնցից երկուական տրւում է քահանային ու ժամարին, և մի մի հատ աղքատներին: Գերեզմանի վրայ վառում են մոմեր, լալիս, ողբում, քահանային օրհնել տալիս և վերադառնում, սգատանը հաց ուտում և ցրում:

Բոլոր մեռելոցներին, բացի Մնեդեան մեռելոցի օրը եղանակի վատութեան պատճառով, գնում են գերեզմանատուն, տանելով իրենց հետ զաթայ, և գերեզմանն օրհնելուց յետոյ բաժանում՝ քահանային, ժամարին և աղքատներին, ինչպէս և իրենց զրացիներին:

Համբարձման չորեքշաբթի երեկոյեան ժամասացութիւնից առաջ քաւորկինն ու սանամէրը, խնամիներն ու զրացիները գնում են սգատուն, և սգուորներին տանում գերեզմանատուն, օրհնել տալիս գերեզմանը: Սգատնից բերւում է գերեզմանատունը զաթայ և բաժանում քահանային, ժամարին ու աղքատներին, ինչպէս և զրացիներին: Գերեզմանօրհնէքից յետոյ վերադառնում են և ընթրում:

Մանուկները.—Ս. Խաչի պահոց ուրբաթ օրը, առաւօտեան ժամասացութիւնից յետոյ, կանայք խաղող, ձմերուկ և հաց առած գնում են գերեզմանատուն, օրհնել տալիս գերեզմանը, և ցրում այդ մրգերն ու հացը քահանային, ժամարին և աղքատներին: Այս մրգերը մանուկներն և կոյւտում: Տուն վերադառնալիս զրկիցներին էլ են բաժանում զրանցից:

Շատ անգամ ննջեցեալի անունը գնում են նորածնի վրայ, ուզենալով նրա յիշատակը վառ պահել և այս դէպքում յաճախ ննջեցեալի հոգու համար պատարագ են մատուցանել տալիս, հոգեհանգիստ կատարում և հոգու հաց տալիս: Այսպիսի երեխային յաճախ կանչում են այն կոչումով, որ տալիս էին ննջեցեալին, օրինակ ոսփօ (հայրիկ), մամօ (մայրիկ), առօ (մայրիկ):

Կենդանի ազգականի անունն զգուշանում են գնելու նորածնի վրայ, վախենալով որ նրա արևն անցնի նորածնին—առաջինը շուտով մեռնի:

Գերեզմանաքարը սովորաբար տարելիցին են ձգում և այս առիթով պատարագ մատուցանել տալիս, հոգեհանգիստ կատարում և հոգուհաց տալիս, որին անպատճառ հրաւիրում են նաև գերեզմանաքարի վրայ աշխատողներին: